ԼՈՒՅՍԱՅ

ԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԷՍԻ

1900 թ.

Ա. ԳԻՐՔ Ի

ՅԱՒԵԼՈՒԱԾ

Ա.

ԿԱՆՈՆՔ Ս. ԺՈՂՈՎՈՅ

ԳՈՐԾ ԱՐԻՍՏԱԿԷՍ ԱՐՔԵՊԻՍ. ԴԱՒԹԵԱՆԻ

1 — 16 եր. (շարունակելի)

Բ.

ԿՈՅՐ ԵՐԱԺԻՇՏԸ

ՎԼ. ԿԱՐԱԼԷՆԿՕԻ

ԹԱՐԳՄ. ՄՈՒՇԵՂ ՎԱՐԴԱՊԵՏԻ

1 — 48 եր. (շարունակելի),

ԿԱՆՈՆՔ

Ս. ԺՈՂՈՎՈՅ ԵՒ Ս. ՀԱՐՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ։

Ա.

Հեղ. Թիւք նակքև ընդ. Թիւք հա. կանո. նաց կան.

ՅԱՂԱԳՍ ԱՂՕԹԵԼՈՅ, ԵՒ ԸՆԴ ԱՐԵՒԵԼՍ ԱՂՕԹԵԼՈՅ։

Առաքելոց ա ա

Կարդեցին Առաքեալք և եդին հաստատութեամբ, թէ յորժամ յաղօթս կան՝ և երկրպագանեն Աստուածութեանն, ընդ արևելս կացցեն. ըստ այնմ՝ զոր ասաց Փրկիչն թէ՝ «որպէս փայլակն փայլատակեալ յարևելից՝ և երևի մինչև յարևմուտս, նոյնպէս եղիցի գալուստ Որդւոյ մարդոյ»։ Զի արեգակն արդարութեան Քրիստոս որդի Աստուծոյ՝ յարևելից ծագեսցէ և արասցէ փրկութիւն ի մէջ երկրի։ Եւ այսու գիտասցուք թէ՝ յարևելս կոյս արժան է յաղօթս կալ, և երկիրպագանել արքային անմահի։

Առաք. խՀՀոն Կղեմ. Թ ա

Զամենայն զմտեալսն յեկեղեցի՝ զհաւատացեալսըն, և զրոց լուեալս, ոչ մնացեալս աղօթից սրբոց հաղորդութեանն՝ իբրև զանկարգութիւնս արարեալ, յեկեղեցւոյ 'ի բաց որոշեսցի։

Ժ խդ

Եթէ ոք ընդ անհաղորդին, թէ և ի տան՝ աղօթակից լիցի, 'ի բաց որոշեսցի։

Ժա խե

Եթէ ոք լուծեալ 'ի քահանայութենէ, այլ ոք քահանայ աղօթակից լիցի՝ իբրև ընդ քահանայի, լուծցի։

Խգ հէ

Եպիսկոպոս կամ երէց կամ սարկաւագ՝ թերահաւատից միայն աղօթակից լեալ, որոշեսցին. ապա թէև նոցա հրամայեսցին իբրև քահանայից՝ աղօթել, լուծցին։

Կ ղդ

Եթէ ոք ժառանգաւոր կամ ժողովրդական մտցէ 'ի ժողովարանս Հրէից կամ թերահաւատից՝ աղօթել, լուծցի։

Նիկիոյ ի ճկզ

Զի են ոմանք որ 'ի կիւրակէի ծունր դնեն, կամ յաւուրսն մինչև ցՊէնտէկոստէ, կամ եղև, զի սմենեցուն՝ յամենայն իշխանութեան, միաբան ար-

ժան է պահել զկարգ, զոր ինչ եդ սուրբ ժողովն, զի յոտն կալով զաղօթս մատուցցեն Տեառն ամենայն երկրի։

Բ.Նկ. ի ճձ Ոչ է պարտ 'ի կիւրակէի յաղօթսն ծունր կրկնել, և ոչ յաւուրս Պէնտէկոստէից։

կ միզ Ոչ է պարտ ընդ հերետիկոսս ճաշակել կամ աղօթել՝ կամ օրհնութիւն առնուլ 'ի նոցանէ։

կա միէ Եթէ ոք առ հրեշտակս կամ առ այլ ոք յարաբածոց՝ յաղօթս կացցէ, նզովեալ եղիցի։

ղգ մծթ Պարտ է զնոյն պաշտօն աղօթից՝ յամենայն ժողովս լինել։

ղդ մկ Պարտ է զկնի վարդապետութեան երախայի՝ յաղօթս լինել։

Անակոք բ յկզ Ամենեքին ով և մտանիցեն յեկեղեցի Աստուծոյ, և յետ ունկն դնիլոյ սուրբ գրոց՝ ոչ հաւասարեցին առ ետեղ աղօթից հասարակաց ժողովրդեանն, և զդէմս դարձուցեալ 'ի սրբութենէն ընդունելութեան դովութեան, ըստ իրաց ինչ ստահակութեան և յանդգնութեան, ընդ ոտն հարկանիցեն, զայնպիսիսն մերժել և ընկենուլ արժան է 'ի սուրբ եկեղեցւոյ. մինչև խոստովան լինել և ցուցանել ամենայն աշխատութեամբ և տառապանօք զապաշխարութիւն իւրեանց, և ապաչեսցեն թերևս՝ այսպէս արժանի լիցին ընդունելութեան։ Իբրև ոչ իցէ նոցա մարթ՝ հաւասարիլ այնոցիկ՝ որ ազատեալ են 'ի կսալանաց եկեղեցւոյ, և որ ընդ եկեղեցեաւն իցեն, և ոչ 'ի տունս ուրեք զատ՝ ընդ այնպիսիսն մարթ իցէ յաղօթս կալ՝ որ մերժեալ իցեն յեկեղեցւոյն. և ոչ 'ի ժողով կամ յիշխանութիւն այլոյ եկեղեցւոյ արժան է մերձեցուցանել զայնպիսիսն։ Ապա եթէ երևեսցի կամ գտցի ոք յեպիսկոպոսաց, յերիցանց, կամ 'ի սարկաւագաց և կամ ո՛ ոք և իցէ յաստիճանէ՝ և անհաւասարացն հաւասարեաց, զայնպիսիսն՝ ընդ նոսին արժան է մերժել և կապել, զի պատճառք եղեն խանգարման կանոնաց եկեղեցւոյ և զմիմեանս հարկանելոյ։

Լաւոդ. ժբ նէ Զի զնոյն ինքն զպաշտօն աղօթից, յամենայն ժամ՝ և յերեկորին արժան է կատարել։

ժթ ճբ Արժան է ուրոյն՝ յետ թարգմանութիւն առնելոյ եպիսկոպոսացն. նախ՝ յերախայից վերայ աղօթս առնել, և յետ ելանելոյն երախայից. ապա ապաշխարողաց աղօթս առնել, և յետ սոցա՝ 'ի ձեռն խոնարհելոյն զօրհնութիւնս ընդունելոյ և արտաքս գնալոյ. և այսպէս 'ի վերայ հաւատացելոցն աղօթս

առնել երիցս, զմին՝ լուութեամբ, և զերկրորդն և զերրորդն քարոզութեամբ կատարել. ապա այսպէս՝ զողջոյնն տալ երիցանց և եպիսկոպոսաց, ապա աշխարհականք միմեանց. և ապա պատարագն կատարեսցի, իբրև միայն քահանայիցն արժան է և յորատիճանին, և ոչ եթէ կէս սարկաւագաց, թէ սաղմոսողաց 'ի բեմ ելանել, և 'ի սեղանոյն օրէնս առնուլ։

Զդ նիր Զէ մարթ ընդ այլազգիս կամ ընդ հերձուածողս յաղօթս կալ։

Թա-դէոսն առաք. Դարձեալ ասէ առաքեալ, յորժամ 'ի մի վայր ժողովեսցին հաւատացեալք՝ յաղօթսն 'ի Տան Աստուծոյ զայլ ինչ մի՛ խօսեսցին, բայց միայն զաղօթսն, մի՛ քրթմնջեսցեն ընդ միմեանս, այլ կացցեն ընդ արևելս՝ ձեռս 'ի վեր ամբարձցեն, խնդրելով զարդարանալն, և արքայութեան արժանի լինել. և բարեացն՝ որ անդն է պատրաստեալ՝ արժանանալ։

Թ լէ Փիլիպ. առաք. Ամենայն այր կամ կին և կամ մանկունք դատարկացեալք 'ի գործոյ, և յայգւոյն և յերեկոյն խափանեսցեն զաղօթսն՝ ոչ գնալով յեկեղեցի ունկն դնել սահմանեալ կարգացն, նզովեալ է։

Ի ոկդ Քարոզ Եթէ ոք ողջ իցէ մարմնով, և անփոյթ արասցէ զաղօթիցն, կամ զուսումն սաղմոսաց, պատճառելով զպատճառս մեղաց՝ որոշեսցի, կամ չարաթ մի պահեսցէ։

Ղեմ. Հռ. Ա. Սահմանք և հաստատութիւնք եկեղեցւոյ զՔրիստոսական Խաչն և զսրբասացութիւնն զօր հանապազ կատարեմք յաղօթս մեր, այսպէս, սուրբ

Լ ռձա Աստուած, սուրբ և հզօր, սուրբ և անմահ, որ խաչեցար վասն մեր՝ ողորմեա մեզ։ Եւ ընդէ՛ր երեքին, զոր օրինակ ժամանեալ ոք արքայութեան նորա և երիցս երանեան, այսպէս և մեք երիցս ասեմք երեքկին, սուրբ Աստուած, սուրբ և հզօր, սուրբ և անմահ, որ խաչեցար վասն մեր՝ ողորմեա մեզ։

Յովհ. քմտա. Արժան է 'ի չարաթու երեկոյեան՝ մարտիրոսաց պաշտել, և ծունր չկրկնել, և զհրաբացն օրհնութիւն ասել, «Լոյս զուարթ սուրբ»։

Ժէ ող Ժբ ռմա Արժան է գիշերապաշտօն առնել յայգ կիւրակէի, և հսկմամբ, արտասուօք և ոտնկաց տքնութեամբ, զանցեալ չարաթուն աւուր զյանցանսն ջնջել, և արժանաւոր առնել զինքն մեղսաքաւիչ և կենդանարար խորհրդոյն, և ակն ունել ամենայն զուարթութեամբ

և փութով Տեառնագալուստ փողոյն՝ և անճառ յաւիտենական արքայութեանն։

Յովհ. Մանդ. գ ոյժը ե ոյի

Այլ և յաւուր կիւրակէի և 'ի զատկէն մինչև ցՊէնտէկոստէ՝ ծունր կրկնել ոչ հրամայեսցին, այլ աղօթս կալ։

Ի զատկէն մինչև ցՊէնտէկոստէն, ամենայն աւուրք՝ որպէս կիւրակէ են՝ ծունր ոչ հրամայի դընել, այլ յոտն կալով երկրպագութեամբ մատուցանել զաղօթս։

Բ.

ՑԱՂԱԳՍ ԱՒՈՒՐՑ ՊԱՏԱՐԱԳԻ, ԵՒ ՊԱՏԱՐԱԳԻ։

Առաք. Բ բ

Կարգեցին առաքեալք և եղին հաստատութեամբ, եթէ յաւուր միաշաբաթուոջ՝ յամենայն կիւրակէի, եղիցի տօն, և պաշտօն, և խորհուրդ Տէրունական մարմնոյ և արեան Տեառն, զոր պատուիրեաց մեզ Կենարարն։ Եւ հաց պատարագին՝ 'ի նմին աւուր ջերմ եփեալ ելցէ 'ի սուրբ սեղանն, և արժանաւորքն հաղորդեսցին, մի՛ արհամարհանօք, այլ մեծաւ երկիւղիւ։ Եւ գատարկացեալ և փոփկացեալ եղիցի միաշաբաթն, որպէս պատուիրեաց Աստուած՝ Նոյի, Աբրահամու, և Մովսիսի, զի և մեզ հանգիստ լիցի յերկրաւոր աշխատութենէն, և յեօթներորդումն դարու՝ 'ի գալստեան Տեառն յարքայութեան յաւիտենից։ Եւ յամենայն միաշաբաթուոջ ընթերցցին գիրք սուրբք՝ Մարգարէականք և Առաքելականք, ե յաւարտման 'ի գլուխ ամենեցուն՝ ընթերցցի Աւետարան, և մատուսցի պատարագ։ Վասն զի յաւուր միաշաբաթուոջ եղեւ լինելութիւն արարածոց, եւ յաւուր միաշաբաթուոջ՝ յարեաւ Տէրն մեր Քրիստոս 'ի մեռելոց. յաւուր միաշաբաթուոջ ծագեցաւ լոյս աշխարհի, և յաւուր միաշաբաթուոջ Պէնտէկոստէիցն երևի՝ 'ի վախճանի աշխարհիս, հայրական փառօք և երկնաւոր հրեշտակօք։

ե ե

Կարգեցին Առաքեալք և եղին հաստատութեամբ՝ թէ յաւուր շաբաթի եղիցի տօն, և պաշտօն ընդ ամենայն տիեզերս, և եղիցի յիշատակ ամենայն մարտիրոսաց, պատարագ մատուսցեն 'ի նմա քահանայք, և ուրախութեամբ սաղմոսեսցեն, վասն զի կարապետ է գալստեանն մեծի արքայի, պարտ է ամենայն սրբոց ուրախ լինել ընդ առաջ Քրիստոսի։

Վա լա Կարդեցին Առաքեալք և եղին հաստատութեամբ, եթէ հայ պատարագին, 'ի նմին աւուր եղցէ 'ի սեղանն, յորում աւուր եփեսցի, և մի՛ լիցի իշխանութիւն զկնի աւուրց հանել, զի և Մովսէս ոչ պակասեցուցանէր զհացն ՉԵՐՄ յերեսաց Տեառն։

Բ.Նիկ, ճե մհա Ոչ է պարտ ի քառասնորդսն պատարագ մատուցանել, թէպէտ և մարտիրոսաց յիշատակ իցեն, բայց եթէ ի շաբաթի և ի կիւրակէի։

ճժգ մհթ Ոչ է պարտ եպիսկոպոսաց կամ երիցանց ի շինական տունս պատարագ մատուցանել։

Թաղ. առք. զ նհա Դարձեալ ասէ Առաքեալն՝ զհաց պատարագին՝ յորում աւուր մատուցանիցեն զպատարագն, ի նմին աւուր եփեսցեն խաչապէս դրոշմամբ, նոյնպէս և զդինին սուրբ բաժակին՝ սուրբ ամանօք հանցեն ի սուրբ սեղանն. մի՛ ոք յանդգնեսցի խառնել ի նոյն՝ ջուր, զի չէ այն Աստուածահաճոյ, այլ անագորոյն մտաց. և որ ոք առնէ զայնպիսին, չէ նա քրիստոնեայ. նզովեալ եղիցի, մինչեւ դարձցի յաղանդոյն։

ժգ նհը Դարձեալ ասէ Առաքեալն՝ ամուսնացեալ քահանայք, յորժամ մատուցանել կամին զսուրբ պատարագն, վերիս աւուրս հրաժարեսցին ի կանանց իւրեանց՝ ցմատուցումն իւր. զի եթէ զհաց առաջաւորութեան ոչ ետ քահանայն՝ առանց քննելոյ և գտանելոյ զսրբութիւնն, որչափ եւս առաւել՝ որ զայս երկնաւոր պատարագս մատուցանեն, պարտին սուրբ լինել եւ պատրաստ, որպէս Աստուծոյ սպասաւորք. ահիւ կալ եւ դողութեամբ, զի արժանի լինիցին անմահ կենացն։

ժդ նհթ Եթէ ոք կուսութեամբ քահանայութիւն ընկալեալ է՝ այնպիսին ոչնող լիցի, պահող յորում աւուր զսուրբ պատարագն մատուցանել կամի. պատրաստ լիցին զդիշերն ամենայն՝ ոչնել սուրբ խորհրդով, առանց ամենայն կեղծաւորութեան, զի ընդ Աստուծոյ ի խորհուրդ մտանէ։

Լաւոդ ծդ ՉՊը Ոչ է արժան ի տունս պատարագ մատուցանել եպիսկոպոսի կամ երիցու։

Գրդը լուս. ժը չիե Չէ պարտ, ուր նշխարք մարտիրոսաց դնին, ի վերայ պատարագ մատուցանել։

Ա.Թեոս. թ չիչ Հարց. Թէ ոք կոչեսցէ զվիճակեալն ի զուգաւորութիւն ամուսնութեան, և ինքն լարչիցէ յամուսնութիւն անօրէնութեան, կամ քենոյ ամուսնութեան, այսինքն քեռ կնոջն՝ յառաջագոյն եղեալ։

որ հանդերձեալ է զուգիլ, թէ պարտ է վիճակեցեալոյն աղօթս առնել ի վերայ նոցա, և կամ պատարագ մատուցանել։

Պատաս.—Մի անգամ ասացի, թէ լուիցէ վիճակեալն զանօրէն ամուսնութիւն, ապա եթէ ամուսնութիւն անօրէն է, ոչ է պարտ վիճակելոյն հաղորդիլ մեղաց օտարաց։

ԺԴ. ՀԱՐՑ—Արիանոսաց մերձ կալով, կամ այլոց հերձուածողաց, պարտ է պատարագ մատուցանել։

Պատաս.—Ոչ է պարտ զսուրբ պատարագն մատուցանել, բայց եթէ խոստովանեսցին ի հերձուածոյն փախչիլ։

ԺԵ. Եւ որպէս մերձեսցուք առ սուրբ սեղանն, եւ կենդանարար խորհուրդ։ Առ այդ անմահութեան վիճակ՝ մի ոք երկմտութեամբ, և մի թերահաւատութեամբ, եւ մի գործովք անարժանութեան մերձ լինել յանդգնեսցի. զի մի զկամս Աստուծոյ ի բարկութիւն առ ամենայն երկիր չարժեսցէ. եւ ինքն լուիցէ զասացեալն՝ դու ընդէ՞ր բնաւ պատմես զարդարութիւն իմ, զի ատեցեր զխրատ իմ, այլ ուղիղ գնացիւք եւ ճշմարիտ հաւատով մատուցեալ լուսաւորեսցի, եւ այլոց ինքեամբ գործեսցէ փրկութիւն։

ԺԶ. Եւ զի՞նչ արժան է զխորհուրդն կատարել զփրկական մարմնոյ եւ արեանն Տեառն։ Պարտ է երկիւղիւ եւ զգուշութեամբ կատարել, եւ ուղիղ դաւանել խոստովանութեամբ՝ ուրոյն ի հերձուածողացն փորձիչ խորհրդոց. զի մի արիանոսացն մերձ լինելով, ըստ առաքելոյն՝ անունն Աստուծոյ եւ ճշմարտութիւնն հայհոյեսցի։

ԺԷ. Եւ որպիսի օրինակաւ նուէրք սրբութեան յօրինեսցի։ Հանել ի սեղանն վհայն սուրբ՝ ջերմ, ըստ առաքելոցն աւանդութեան, եւ անապակ առանց իրիք խառնման. զի ոչ ապականացու իւիք փրկիմք, այլ անապական մարմնով եւ արեամբ՝ անբիծ եւ անարատ գառիւնն. եւ զայս մինչեւ ի սեղանն՝ սարկաւագունք յօրինեսցեն, եւ զկատարեալն ի վերայ քահանայքն կատարեսցեն։

ԺԸ. Եւ զի՞նչ եկեսցէ ի ձեւ սեղանն՝ և խորհրդոյն և այլ եւս կարգ։ Սեղանն քաւութեան՝ ընդ վարագուրաւն, յորում Հոգին սուրբ իջանէ, եւ Աւազանն յետոյ առ նմին տամբ՝ պատուով հաստատեալ յաջմէ, եւ ժառանգաւորք իւրաքանչիւր աստիճանաւ պաշտեսցեն, եւ ժողովրդականք արտաքոյ վարագուրին, եւ երեխայքն առ դրունսն

ունկնդրութեամբ, զի մի ընդ միմեանս ելանելով՝ եղծցին կարգքն, այլ իւրաքանչիւր կայանիւ անարատ մնասցէ։

Թ ռճկը Զայս աւանդեմ ձեզ պատուիրան հաւատոյ եւ կարգաց եկեղեցւոյ, ըստ խնդրոյ աղաչանաց ձերոց. և նզովեմք ի վերայ այսոցիկ՝ զայլաձեւս խորհեալսն. զի ի միմեանց ընկալեալ ձեռնադրութեամբ չնորհս, ոչ երբէք բերեմք պակասութիւն, և միապատիւ ոչ իրաւունս վարկանիմք զկարգեալսն ուղղափառապէս՝ եկեղեցւոյ. և զփառամոլանձինս կշտամբիմք՝ որ խորհին հակառակ. որպէս պատմեալ եղեւ մեզ զՏուրկիոյ, Բասենոյ և Բագրեւանդայ ե. պիսկոպոսաց, որ սակաւուք ընդ Արիանոսս միաւորեալ է՝ և դարձեալ խղճեալ. և արդ, այլ ևս յանդգնագոյնս խորհի եպիսկոպոս՝ միայն աթոռաւ, և ընդ Արքեպիսկոպոսին՝ ինքեամբ անձին տայ պատիւ, զոր չէ արժան ընդունել. զի և ոչ հարքն աւանդեցին զայսպիսի ինչ հակառակութեան՝ յեկեղեցի մուծանել, և անվայելուչ է՝ համարել հաւասար, մինչև կոչմամբ ի պատիւ Աթոռոյն ժամանեսցէ։ Եւ արդ, պարտ է զայնպիսին ի հնազանդութիւն կոչել, և եթէ ի նոյնն մնասցէ՝ խորշիլ իբրև յօտարէ։

Սահակ վերջն. Հարց.—Պարտ է ի կենդանութեան զպատարագս ելից իւրոց կատարել ումեք. զհոգւոյ հանգիստ

Ը ռճհզ և զյիշատակ, և զմասն. թէ յետ վախճանին՝ այսոքիկ կատարին։

Պատաս.— Չէ պարտ՝ նախ քան զվախճանն՝ զկատարմանն պատարագ ի կենդանութեան մատուցանել. վասն զի սուրբ Առաքեալք, և յետ նոցա սուրբ Հարք. յետ կատարածի կենացն ի հանգիստ հոգւոց և ի թողութիւն մեղաց՝ զայսոսիկ հրամայեցին կատարել։

Ժբ ռճձ Հարց.— Ի մատրունս՝ յորս սեղան հաստատեալ է և գործն իւր ոչ գործի ի վերայ հանապազ, ոչ քահանայ առ ընթեր, և ոչ սպասաւորութիւն, այլ մի օր ի տարին՝ երթան պատարագ մատուցանել, արժան է ի պատուի ունել՝ թէ չարժել։

Պատասխ.—Շարժել արժան է, զի մինչ հանապազ գործն ի վերայ չկատարի, նա արհամարեալ է, և ոչ է սեղան։

Յովհ. իմաս. Արժան է ի սուրբ քառասնորդն պահոց՝ յաւուր շաբաթի և կիւրակէի պատարագ մատուցանել՝

Զ ռճկթ ահիւ և երկիւղիւ ըստ սահմանելոյ սրբոց հարց յամենայն ժողովս իւրեանց։ Իսկ եթէ ոք հակառա-

կեալ ընդիմասցի մերում հրամանիս՝ կամ բանիւ ոք և կամ գործով, եթէ ուխտաւոր է լուծցի, եթէ աշխարհական՝ որոշեսցի։

Ը ռճղա Արժան է զհացն անխմոր և զգինին անապակ հանել ի սուրբ սեղանն. ըստ աւանդելոյ մեզ՝ սրբոյն Գրիգորի, և ոչ խոնարհիլ յայլազգեաց քրիստոնէից աւանդութիւնս. զի սուրբ Լուսաւորիչն յօրինակէն բերեալ զայս առաքելաբար հրաման ետ կատարել իւրոց վիճակելոցն, որպէս և զաղն օրհնութեան՝ յագապացն զենմունսն խառնել և ըստ կարգի զետացեալ ազգաց սեպհականել զեկեղեցւոյ շնորհ, և մեզ ի նմին պարտ է յարամնալ, և ոչ թողուլ ի բաց, և չառնել նորաձեւս ինչ։

Եվրեմ կրօն. Ը ռմխէ Եւ զՏէրունական պատարագն ի կիւրակէի և յայլ աւուրս անխտիր կատարեսցեն, իսկ ի չորեքշաբաթի և յուրբաթի ոչ։

Կարգ. ժողով Ը ռմհէ Դարձեալ ի վերայ այսր ամենայնի պատուիրանադիր աւանդութեանս, զեր քան զասացեալս աւանդեմք կանոնական սահմանադրութիւնս, հանուրց ժառանգաւորաց սրբոյ եկեղեցւոյ, և սպասաւորաց խորհրդական սեղանոյն. զի լուաք լուր սարսափելի և ծանրագոյն՝ թէ ի տեղիս տեղիս ոմանք յառաջնորդաց եկեղեցւոյ՝ խմորեալ ի Նեստորականաց և ի Քաղկեդոնականաց ապականեն զսուրբ խորհուրդն՝ խառնմամբ ջրոյ և խմորոյ։

—Արդ յայսմհետէ, եթէ եպիսկոպոս կամ երէց գտցի, որ այսպիսի չար սովորութեամբ աւանդեսցեն զսուրբ խորհուրդն, լուծցին յամենայն քահանայական պատուոյ, և ի սուրբ ժողովոյն նզովեղիցին։ Ապա եթէ տգիտութեամբ ոք արար, և յետոյ զղջացեալ խոստովանեսցի, ընկալցի զայնպիսին սուրբ եկեղեցի, Դ. ամ տպաշխարութեամբ։— Իսկ եթէ ժողովրդական ոք հաղորդեսցի տգիտութեամբ այնպիսի հերձուածողական ապականեալ օրինացն, արտաքոյ եկեղեցոյ ապաշխարեսցէ՝ ամս Բ.։—Իսկ կամօք և գիտութեամբ արարօղք՝ զամս Զ., արտաքոյ եկեղեցւոյ լիցին մեծաւ զղջմամբ, և վարդապետն հայելով ի ջերմագին արտասուսն՝ արժանաւորեսցէ խորհրդոյն, ապա թէ ոչ ապաշխարեսցին և արհամարհեսցեն զպատուիրեալսն ի մէնջ՝ ի սուրբ ժողովոյն, նզովեալ եղիցին։

Թ ռմհը Զգուշացուցանեմք դարձեալ զեպիսկոպոսունս, զքահանայս, և զսարկաւագունս, զի մի լիցի հա-

մարձակութեամբ սպասաւորել սրբոյ սեղանոյն, հասարակօրէն հանապազորդեան հանդերձիւ, այլ ըստ իւրաքանչիւր ասաիճանի՝ զգեցցին պարեգօտս և պատմուճանս։— Եպիսկոպոսապետն — Կաթողիկոսն՝ զգեցցի ի ներքոյսն պարեգօտս սպիտակս, և ի վերայ նափորտ՝ երկոտասան խաչիւ նկարակերտեալ և ամփոփեալ թեղանեօք՝ և Եմիփորոն, որպէս և այլոց եպիսկոպոսացն, և յաջոյ կողմանէ կոնքեռ նկարակերտ. նմանապէս և զայլ կարգաւորութիւնս արասցէ ըստ գրելոցս։—Նոյնպէս և եպիսկոպոսն զգեցցի կամար բոլորաստորոտ, սպիտակ ստորագգեցեալ, և ի վերայ աղաբողոն՝ առանց թեղանեաց բոլորեալ չուրջանակաւ. և ուրար զերկոսին ուսովք, և զսպեալ թեղանեօք, և զգօտեաւն ունելով դաստաւակ խաչանման յաջմէ կողմանէ, և ի վերայ աղաբողոնին կրկնաւ խաչիւք հնդօք եմիփորոն և կօշիկս զգեցեալ և սքօղեալ մինչև ցժամ խորհրդոյն. իսկզբան աղօթիցն վերացուցեալ զծածկոյթ գլխոյն առանց սքօղելոյ կացցէ մինչև յաւարտումն խորհրդոյն։—Նոյնպէս և քահանայք զգեցցին սպիտակ պարեգօտս ի ներքոյ և ուրար զերկոսեան ուսովք, և ի վերայ զաղաբօղոն պճղնաւոր առանց թեղանեաց՝ և կօշիկս յոտս. բացաւ գլխով սպասաւորեսցէ խորհրդոյն սրբութեան։—Եւ ոչ միայն գլխոր հուրդն սուրբ, այլ զամենայն քահանայագործութիւն, զձեռնադրութիւն քահանայի, և զօրհնութիւն եկեղեցւոյ, և զայլ ինչ որ յանկաւոր է՝ եպիսկոպոսաց և քահանայից, մի՛ իշխեսցեն առանց պատմուճանի կատարել։—Նոյնպէս և սարկաւագունք զգեցցին պատմուճան սպիտակ, և կացցեն ի սպասու խորանին՝ հոլանիք, և գօտելոյծք լիցին ի ժամ պատարագին, և ուրար զահեակ ուսովն խաչանկար, և զքչոցն հովանի կալցեն ի վերայ սեղանոյն քաւութեան։—Եւ կէսքն ի նոցանէ բուրվառս բարձեալ ի ձեռս՝ ակումբ առեալ զքաւութեամբն՝ մատուսցեն զբուրումն անուշահոտութեան՝ մեղսաքաւիչ խորհրդոյն. և զհաց պատարագին ինքեանք կազմեսցեն սաղմոսիւք և զգուշութեամբ, և զսուրբ խորհուրդն հանել ի սեղան, և իջուցանել և քարոզել, և յայլ ինչ մի՛ ամենեին համարձակիլ։—Եւ ոչ հրամայեմք եպիսկոպոսի կամ քահանայի, առանց մերձակայութեան սոցա եւ սպասաւորելոյ՝ քահանայագործել։

Արդ, որք մտերիմ և երկիւղած մտօք հնա-

զանդին մերոյս սուրբ ժողովոյ կանոնագրութեան, խաղաղութիւն ի վերայ նոցա և ողորմութիւն. և որք ստունգանեն՝ հեստելով յԱստուածադիր օրինագրութենէս, լուցկիք լիցին հրոյն յաւիտենից տանջանաց։

Ներս. Եղբօր Գրգրս կաթղ. Մի՛ ոք իշխեսցէ ժամ առնել վախճանելոյ, որոյ չէ կենայ վկայ, և ոչ գոյ այլ վկայ ի միջի. զի զայս պարտ է հաստատութեամբ քննել առաջնորդիս ոյձզ դաց եկեղեցւոյ։

Լա ոյղբ Զբաժակ խորհրդոյն ըստ բաւականին արկցէ ի սկիհն. իսկ յորժամ սկիզբն արասցէ աղօթիցն, ոչ է պարտ այլ խառնել, եւ զկնի կատարման խորհրդոյն՝ մինչչև մաքրեալ իցէ ամենեին զսկիհն, եւ զմատունսն, ոչ է պարտ այլ անմատոյց գինի արկանել ի սկիհն ի լուացումն մատանցն. բայց լաւագոյն է զի մի՛ յայսպիսի իրս սովորեսցին. զի աւելորդ է։

Լբ ոյղդ Եթէ մասն գտանէ անկեալ ի վերայ սեղանոյն, պարտ է ճաշակել զկնի աւարտման ժամուն. իսկ եթէ յանմատոյց բաժակէ ճաշակեալ է՝ զդտեալն պահեսցէ զդուշութեամբ ի վաղիւն՝ ի կատարման պատարագին։

Ծբ ռնժդ Ասեն ոմանք՝ թէ արև իջանէ ի վերայ նշխարին և կամ որ զնշխարն յարեւ հանէ, նոքաւ չէ մարթ ժամ առնել. պարտ է ժամ առնել չէ վնաս. եւ ոչ խիղճ։

Ծգ ռնժդ Եթէ նշխարն ի գուեհ զետին անկանի՝ չէ պարտ այնու ժամ առնել. մանաւանդ եթէ տեսողք լինին և գայթակղին։

Ճժա ռնհբ Պարզած գինով՝ որ հացիւ է. կամ նշով կամ այլ ինչ նիւթով, ոչ է պարտ ժամ առնել, զի խառնեալ է ընդ կերակրողական նիւթոյն։

Գ.

ՅԱՂԱԳՍ ԱՒՈՒՐՑ ՊԱՀՈՑ, ԵՒ ՊԱՀՈՑ

Առաք. Գ Կարգեցին առաքեալք և եդին հաստատութեամբ, թէ օր չորեքշաբաթի պահք եղիցին. զի ի

նմա գուշակեաց և յայտնեաց Տէրն և կենարարն զխորհուրդ չարչարանաց իւրոց և մատնութեան, և դատաստանի և խաչելութեան և մահուան և յարութեան՝ աշակերտացն իւրոց, եւ տրտմեցան առաքեալքն։ Արդ եղիցի ի պահս և ի սուգս եւ ի պաշտօն և յաղօթս ցնծութեան եւ ուրախութեան։

Դ Դ Կարգեցին առաքեալք եւ եդին հաստատութեամբ, թէ ուրբաթ եղիցի ի պահս եւ ի սուգ եւ ի տրտմութիւն։ Վասն զի որ ինչ ասացաւն յաւուր չորեքշաբաթի վասն չարչարանաց Փրկչին մերոյ, յուրբաթին կատարեցաւ, յորժամ չարժեցան արարածք ամենայն՝ եւ խաւարեցան լուսաւորք ի յերկինս, պահեալ լիցի մինչեւ ցիններորդ ժամն։

Ը Ը Կարգեցին առաքեալք եւ եդին հաստատութեամբ, թէ զքառասուն օր պահս կարգեսցեն, յամենայն չարութենէ, ի մեղաց եւ ի կերակրոց, յառաջ քան զօրն չարչարանաց Փրկչին մերոյ։ Նա ապա արասցեն զօրն չարչարանաց, պասէք Տեառն, եւ տօն Յարութեան փրկչին։ Ընթերցցին գիրք Մարգարէականք եւ Առաքելականք, որ պատմեսցեն զչարչարանացն Տեառն, եւ զգուշակումն Յարութեան Փրկչին։ Քանզի եւ Ինքն իսկ՝ Տէր մեր Քրիստոս, Տէր տօնից եւ տարեկանաց՝ պահեաց զքառասուն տիւ եւ զքառասուն գիշեր։ Նոյնպէս եւ Մովսէս ի Սինէական լերինն, ի ձեռն պահոց՝ իբրեւ սիրելի եւ բարեկամ խօսէր ընդ Աստուծոյ, եւ մեծապէս պատիւ գտնեալ յերկնաւոր արքայէն, ահեղ երեսօք զարքունական օրէնս եւ զկանոնս բերեալ իջանէր առ ժողովուրդն։ Նոյնպէս եւ նախանձաւորն Հեղիաս ի ձեռն քառասնօրեայ պահոց՝ մեծապէս նշանս եւ զօրութիւնս գործելով՝ ապա կառավարեալ ասպատակէր յերկինս։ Եւ երեք մանկունք ի ձեռն սրբութեան պահոց, ի մահուանէ թագաւորին ազատեցան, եւ զթագաւորին ի գիտութիւն ճշմարտութեան ածին, եւ բարի անուամբ կեցեալ՝ արժանի եղեն արքայութեան Քրիստոսի։

Առաք. ի ձեռն պղեմ. Եթէ ժառանգաւոր գացի՝ զօր կիւրակէի կամ
ԺԹ ՂԳ զչաբաթի պահել՝ լուծցի. եւ ժողովրդական ի հա-
զորդութենէ որոշեսցի։

ԿԴ ՂԸ Եթէ ոք եպիսկոպոս, կամ երէց, կամ սարկաւագ, կամ գրակարդաց եւ սաղմոսերգու զսուրբ քառասնորդս ոչ պահեսցէ, եւ զչորեքշաբաթ, եւ զուրբաթ, լուծցի։ Բայց եթէ վասն հիւանդութեան

ինչ մարմնոյ խափան լինիցի, իսկ եթէ ժողովրդական ոք իցէ՝ որոշեսցի։

ԾԸ միդ Ո՛չ է պարտ քրիստոնէից ի շաբաթու կամ ի կիւրակէի շաբաթանալ կամ հրէանալ։

ԿԸ մլդ Եթէ ոք յաղագս ճգնութեան պահիցէ յաւուր կիւրակէի, կամ յաւուրս Պէնտէկոստէից, նզովեալ եղիցի։

Բ.Նիկ. Ը մլզ Եթէ ոք առանց մարմնական վտանգի՝ զեկեղեցական պահս լուծանէ նզովեալ եղիցի։

ՃԶ մՀԸ Ո՛չ է պարտ զքառասնորդսն մեծի հինգշաբաթին լուծանել կամ չորակեր լինել։

Գանգ. ԺԸ պԾԸ Ոյք յարանց՝ պահս ինչ՝ համարեցան տրտում՝ եւ զտխուր հանդերձ ինչ ագանել, որպէս թէ այսպիսի ինչ իրօք արդարասցին, եւ դատապարտեն զայնոսիկ՝ որք ահիւ եւ երկիւղիւ եւ ոչ փառասիրութեամբ զսովորական հանդերձսն ագանեն, եւ դսրովին այսպիսեօքս, նզովեալ լիցին։

ԺԹ յԾԹ Եթէ ոք ի պահողաց՝ արտաքս քան զհարկ ինչ մարմնաւոր, այսինքն է ցաւոց եւ վշտաց, ամբարհաճեաց եւ ամբարտաւանեաց, եւ զտուեալ եւ զկարգեալ զպահս հասարակաց. որ պահի յեկեղեցւոջ՝ ելոյծ եւ արհամարհեաց՝ իբրեւ կրիցի ի նմա կատարեալ միաք եւ խորհուրդք, նզովեալ է։

Ի յԿ Եթէ ոք ի մարդկանէ կատարեալ հասակաւ՝ առողջ մարմնով, քրիստոնեայ անուն ի վերայ ունելով, զքառասուն աւուր պահսն ի գլուխ ոչ տանիցի, այնպիսին նզովեալ եղիցի։

Խա յԿա Եթէ ոք զքառասունսն պահեսցէ սրբութեամբ, եւ ի Զատկի հինգշաբաթի օրն՝ նախ քան զհաղորդելն օրինաց, և բաժակին սրբելոյ, յայլ ինչ աւելի համարձակեսցի ուտել զպահսն՝ զոր պահեաց. ընդունայն լիցի եւ ի մէջ ժողովոյն նզովեալ։

Լաւոդիկ. Խզ ՆլԸ Զի չէ պատչամ ի քառասներորդսն հաց մատուցանել, բայց եթէ ի շաբաթու եւ ի կիւրակէի։

Խէ Նլզ Զէ արժան ի քառասներորդսն յաւագ շաբաթու հինգշաբաթի օրն՝ բերան լուծանել. զի մի ամենայն պահք քառասնորդացն անարգեսցին, այլ արժան է զամենայն քառասնորդսն պահել, եւ լոկ աչտուճ հացիւ մխիթարել զանձինս։

Խը Նլէ Զէ մարթ եւ պատչամ ի քառասնորդսն զմարտիրոսաց ծնունդսն եւ զտօնս առնել, այլ զսուրբ մարտիրոսաց յիշատակս կատարել ի շաբաթու եւ ի կիւրակէի։

Թաղ. առաք. իե նղ

Արժան է Քրիստոնէից զուրբաթ եւ զչորեքշաբաթ պահել եւ աղօթել. զի աւուրք չարչարանաց Տեառն մերոյ են՝ տրտում արտասուօք յիշել զնորա խոնարհութիւն, եւ դոհանալ զնմանէ, որ եկն եւ փրկեաց զմեզ իւրովք չարչարանօք, պահել մինչեւ ցինն ժամն։

իզ նղա

Դարձեալ ասէ առաքեալն՝ յորժամ զտէրունական տօնսն կատարեն հաւատացեալք, նախ յառաջ՝ պահեսցեն շաբաթ մի ի պատիւ եւ ի սպաս տօնին, եւ ապա տօնեսցեն։

իէ նղբ

Դարձեալ ասէ առաքեալն՝ զսուրբ քառասունսն պահեսցեն հաւատացեալք սրբութեամբ, ուրոյն զշաբաթ եւ զկիւրակէ, և յորժամ յօր չարչարանաց Տեառն գայցեն՝ տգնեսցեն եւ անդադար աղօթեսցեն, ժպիտ մի ումեք եղցէ յայն աւուրսն, այլ արտասուս ըստ Տեառն մերոյ. եւ ապա զկենարար պասէքն արասցեն՝ ցնծալով ընդ յառնիլ Տեառն մերոյ. աղօթիւք փառաւորել զնա, որ փրկեաց զմեզ յարութեամբ իւրով. եւ ետ մեզ երգակից վերնոցն լինել։

ԱԹՆ. է չխդ

Հարց.—Եթէ կին ծնանիցի ի պահս սուրբ Զատկին, պարտ է պահել եւ ոչ ըմպել գինի, թէ թոյլ տալ վասն ծննդեանն։

Պատասխ.—Պահք վասն զմարմին խոնարհեցուցանելոյ եդան, ապա եթէ մարմինն ի չարչարանս եւ ի խոնարհութեան եւ ի տկարութեան է, պարտ է սակաւիկ ինչ՝ որչափ կար է բառնալ կերակուր եւ ըմպել։

ը չխե

Հարց. Եթէ ոք տկար իցէ կամ մաչեալ ի բազում հիւանդութեան, եւ եկեսցեն պահք սուրբ Զատկին, ամենայն իրօք պարտ է պահել, եթէ արձակեսցի ճաշակել ի հացէ ի գինւոյ եւ ի ձիթոյ վասն հիւանդութեան։

Պատաս.—Արձակել պարտ է զայնպիսին, առնուլ ի կերակրոց և յըմպելեաց, որչափ կարէ բառնալ. բայց յետ Պենտէկոստէին հատուցէ։

Բաղղի Բ. լա չզ

Զշաբաթ եւ զկիւրակէ եւ զՊէնտէկոստէն, մի՛ ոք իշխեսցէ ընդ պահօք արկանել՝ բաց յայսահրացն եւ որ յառաջ քան զյայտնութիւնն՝ ծնունդ առնէ՝ նզովեալ եղիցի։

կը չխգ

Կին՝ որ ի ծնունդս վարանի յաւուրս պահոց, վասն տկարութեան մարմնոյն՝ արժան է ձէթ եւ գինի տալ, եւ եթէ վախճանի՝ օրէնս։

ՃԸ ՀԺԷ Եթէ ոք ի սուրբ աղուհացսն յաղեսցի յանգէտս, մի ամ ընդ ձեռամբ ապաշխարեսցէ, եթէ դիտութեամբ՝ երեք ամ ընդ ունկնդիրս կացցէ, վարդապետն իշխան է լուծանել զկարգն։

ՆԵՐՍ. ՄԵԾ. ԻԹ ՌԶ Ի սուրբ քառասնորդաց պահս, եւ կամ յառաջաւորս նորին, մի ոք իշխեսցէ լուծանել ըստ սրբոյ կանոնին. եթէ լուծցէ ոք ի քահանայից կամ յաշխարհականաց. զաւուրցն կերակուր պատճառաւ հիւրոց կամ գործակալաց, յեկեղեցի մի՛ իշխեսցէ մտանել. մինչեւ տուժեսցէ աղքատաց ապաշխարութեամբ։

ԼԷ ՌԺԶ Արդ՝ զպատուիրեալս ձեզ առ ի մէնջ, փութապէս կատարել ահիւն Աստուծոյ. յորում կայ մեծաց վարձուց հատուցումն, եւ պատուիրեցաւ ձեզ՝ յամենայն ամսեան պարապել խնդրուածոց, զաւուր չաբաթի միոյ խնդրել յԱստուծոյ՝ զմարմնոյ առողջութիւն եւ զհոգւոյ փրկութիւն։

ՆԵՐ.Բ. ԽԸ ՌԺԶ Վասն որ ի բեմի պահս քարոզեն, որ ոք լուծանէ տուանց մարմնաւոր հիւանդութեան, նզովեալ եղիցի։

ԵՊԻՓ. Բ. Գ ՌՀ Առ հարցումն Թէոդոս քահանայի եկեղեցւոյն Կեսարու։—Կամիմ ասել յաղագս քառասնիցն պահոց, թէ որպէս Մովսէս քառասուն օր պահեաց, եւ Եղիա եւ Տէրն. եւ մեր ոչ ի թիւ արկեալ՝ այնպէս քառասուն օր, այլ զչաբաթ և զկիւրակէ լուծանեն ամենայն ախորժելի կերակրօք եւ զինեաւ՝ բայց միայն ի մսոյ. եւ ոմանք յերեք ժամուն ուտեն՝ ըստ այլ աւուրցն, եւ ընդ պահօք արկանեն, որ լինի ըստ նոցա քառասուն եւ ինն։—Մովսէս պահեաց զքառասուն տիւ եւ զքառասուն գիշեր, նոյնպէս եւ Եղիա, եւ Տէրն մեր զնոյն ճշմարտեաց, զնոցայն քառասնօրեայ պահս անսուաղապէս։ Իսկ մեզ վերջնոցս՝ ըստ տկարութեան մերոյ, օրինադրեցին զցերեկապահութիւն, աղիւ եւ հացիւ, և որ ի նոյն յարմարին պարկեշտիցն սեղանք, զաւելորդ կուրն ըստ մերոյ տկարութեան. բայց ոչ փափկութիւնն մարմնոյ, եւ լինի քառասուն օր պահքն, եւ չաբաթ եւ կիւրակէ՝ քառասուն եւ ինն օր, ըստ քաղաքացն ապաստանի Մովսիսեան օրինադրութեան, որ զմահապարտսն ժողովէր մինչեւ ցվախճան քահանայութեանց, եւ ապա արձակեալ լինէր ի մի մահուանէն։—Նոյնպէս եւ աստ քառասուն ինն օր պահք ի մահուան Քահանայապետին Քրիստոսի, թողութեան առիթ մեղուցելոցն լինի փրկա-

կան պատարագաւն հաւատացելոց, եւ տպաշխարողաց յայսմ քառասուն եւ ինն աւուրս. զի թէպէտ եւ սուրբ հարք՝ յաղագս յիշատակի սրբոց եւ Քրիստոսի պատարագին՝ զշաբաթ և զկիւրակէ լուծեն յերրորդ ժամու ի կերակուրս, այլ ոչ յաւելով ի կերակուր կամ ի դինի զմեզ թողացուցին, այլ ի պարկեշտութիւն. որպէս բերանն Քրիստոսի Պողոս օրինադրէ, լաւ է չնորհօք հաստատել զսիրտս, և ոչ կերակրօք և ըմպելեօք. զի ոչինչ օգտեցան որ այնպէսն գնացին, և ոչ պահեցին պահս։— Վասն այսորիկ և նզովս եդին՝ որք զյղփութիւն՝ օրէնս վարկանէին։— Առաջին սուրբ հարք զչորեքշաբաթ և զուրբաթ և զուխտի շաբաթսն, զՎարդավառին և զԱստուածածնին զՍրբոյ Խաչին և զՅայտնութեան շաբաթն, և զառաջաւորսն, ընդ սմա համեմատեցին ի պահս պնդութեան. ևս առաւել ի վերայ այնոցիկ եկեսցեն չնորհքն Աստուծոյ, որ զերիս յիսունսն պահեսցեն յանուն սուրբ Երրորդութեան։

զՋատիկն և զՎարդավառին և զյայտնութեանն, և ի փրկութեան Տեառն առցեն զաւետիսն, և որք լուծանեն զԱռաջաւորսն և զաղուհացսն և զուխտիցն և զՎարդավառին և զսուրբ Աստուածածնին և զսրբոյ Խաչին և զյայտնութեան շաբաթն, և զչորեքշաբաթ և զուրբաթ, նզովեսցին ի սրբոց հարցն. եթէ ակամայ լուծցեն՝ միոյն՝ քառասուն օր պահեսցեն. եւ եթէ կամաւ՝ երեք ամ արտաքոյ եկեղեցւոյ եւ օրինաց կացցեն, եւ ապա հաղորդեսցին, այսպէս կանոնեաց սուրբ այրն Աստուծոյ Եպիփան, եթէ պահք Աստուածայայտնութեան՝ ապտչխարողաց և կրօնաւորաց եւ քահանայից քառասուն օր պահք սահմանեցին։— Իսկ աշխարհականաց ութ օր, բայց պարտ է զութ օրեայ պահոց զշաբաթ եւ զկիւրակէ զգուշութեամբ պահել. վասն զի ինքն Աստուածայայտնութիւնն ոչ լուծանի, այլ լուծանէ զչորեքշաբաթ եւ զուրբաթ. նոյնպէս եւ զկիւրակէն ծոմացուցանէ։ Եւ ամենայն տօնք մարտիրոսաց անխտիր կատարեսցին։

Յոմ. լմա. է ուճ

Այլ վասն պահելոյ եւ լուծանելոյ զշաբաթ եւ զկիւրակէ ի սուրբ քառասներորդսն պահոց, այս յիւրաքանչիւր կամս թողեալ լիցի, միայն գոհանալով զԱստուծոյ՝ առանց խղճի եւ հակառակութեան, եւ առանց բանբասելոյ զընկերն, զոր կամեսցի եւ տրասցէ հանդերձ պարկեշտութեամբ, երկոքին ըն-

դունելի են Աստուծոյ, եւ յաւանդութենէ եկեղեցւոյ Քրիստոսի։

Եփ. Բ ռմխա

Որք ճաշակեցին ի մոռացութենէ ի մսոյ, ի չորեքշաբաթի կամ յուրբաթի, որոշեսցին յեկեղեցւոյ, երեք շաբաթ պահելով սրբութեամբ՝ եւ տրօք տնանկաց և պատարագօք, Ժ. կրկին գան արբցեն. և ապա հաղորդեսցին։—Իսկ եթէ ամբարտաւանութեամբ արհամարհեսցեն զառաքելական հրամանն, Գ. ամ ապաշխարեսցեն. Խ. կրկին գան արբցեն, եւ Լ. դրամ տուգանս տացեն յեկեղեցին, եւ յաւուրն յորում պղծեցաւ, զնա սրբութեամբ պահեսցէ ցմահ իւր. եւ ապա հաղորդեսցի օրինաց։—Ապա եթէ ազատ ոք է և ոչ առնու յանձն զապաշխարութիւն եւ զկարգ, Ծ. դրամ տուգանս տացէ յեկեղեցին, եւ Զ. դրամ յաղքատս. եւ ապա հաղորդեսցի օրինաց։

Գ ռմխբ

Իսկ եթէ քահանայ դիպեսցի ի նոյն չարիս, մի պաշտեսցէ զքահանայութիւն, այլ է. ամն ապաշխարեսցէ, ապա հրամանաւ եպիսկոպոսին պաշտեսցէ զքահանայութիւն։

Զ ռմխե

Պահք Աստուածայայտնութեան՝ կարգեցան կրօնաւորաց, այրեաց եւ ապաշխարողաց Ծ. օր իսկ աշխարհականաց ութօրեայ. եւ զկիւրակէն, այլ որպէս Աստուածայայտնութիւն՝ ինքն ոչ լուծանէ զառաքելական հրամանն, նոյնպէս եւ զկիւրակէն ծոմացուցանէ. վասն զի լուծանէ զչորեքշաբաթ և զուրբաթ։

Սիոնի Հայոց կաթ. Գ ռմղա

Եւ որ ի չորեքշաբաթի եւ յուրբաթի միս ուտէ յառաջ քան զաղուհացսն մի շաբաթ պահեսցէ։

Ցովհ, Մնդ. Ա ռյժզ

Վասն սրբոյ պասեքին պահոցն ի կանոնս ի շաբաթու ոչ հրամայի պահել, եւ յայտ անտի է. զի շաբաթի յերեկոյին՝ ապաշխարութիւն քարոզի. ի մի դէմսն ըստ Մովսիսի օրինադրին հրամանի պարտիմք պատուել. եւ միւս՝ զի կարապետ է մեծի թագաւորին յառաջընթաց՝ ընդառաջ ելանէ՝ հրագօք եւ մոմեղինօք՝ կիւրակէին։

Բ ռյժէ

Այլ վասն կիւրակէի պահելոյ՝ ոչ կանոնք հրամայեն եւ ոչ վարդապետք. այլ նզովեն եւ անէծս ի վերայ դնեն. զնոյն եւ յժը. Հայրապետք ի Նիկիոյ ս. ժողովն նզովս կարգեցին եւ կնքեցին։



ԿՈՅՐ ԵՐԱԺԻՇՏ

(Էտիւդ)

Ա. ԳԼՈՒԽ.

I

Հարաւ-արևմտեան Ռուսիայի հարուստ ընտանիքներից մէկում, մի խաւար գիշերուայ կիսին աշխարհ եկաւ մանուկը։ Խորին մոռացութեան մէջ պառկած էր նորատի մայրը. բայց երբ սենեակում լսուեց նորածին մանկան առաջին խաղաղ և վշտալի ճիչը, նա անկողնում աչքերը փակ պառկած տեղը սկսեց շարժուել։ Մօր շրթունքները մի բան էին շշնջում. իսկ նրա քնքոյշ, համարեա դեռ մանկական գծագրութիւն ունեցող դէմքի վրայ երևաց տանջանքի անհամբեր շարժումներ, ինչպէս որ երևում է երես առած երեխի դէմքին, երբ իրեն համար մի անսովոր վիշտ է կրում։

Տատմէրը իւր ականջը խոնարհեցրեց նրա շրթունքներին, որ մի բան էին շշնջում։

— Ինչո՞ւ... նա ինչո՞ւ է..., հազիւ լսելի ձայնով հարցնում էր հիւանդը։

Տատմէրը հարցը չհասկացաւ։ Մանուկը նորից

ճչաց։ Սուր տանջանքի ստուերը անցաւ հիւանդի երեսով և արտասուքի խոշոր կաթիլը դուրս ծորեցաւ նրա խուփ աչքերից։

—Ինչո՞ւ... ինչո՞ւ է...՝ կրկին կամաց շշնջում էին նրա շրթունքները։

Տատմէրն այս անգամ հարցը հասկացաւ և հանգիստ պատասխան տուեց.

—Հարցնում էք, թէ ինչո՞ւ է երեխան լաց լինում։ Միշտ այդպէս է լինում, հանգստացէք։

Բայց մայրը չհանգստացաւ։ Եւ ամեն անգամ, որ մանուկը ճչում էր, նա ցնցւում էր և շարունակ ցասկոտ անհամբերութեամբ կրկնում.

—Ինչո՞ւ... այդպէս... այդպէս սարսափելի է։

Տատմէրը մանկան ճչի մէջ ոչ մի առանձին բան չէր նկատում և տեսնելով, որ մայրը կարծես անորոշ մռայլութեան մէջ է խօսում և հաւանականօրէն, ուղղակի զառանցում է, թողեց նրան ու սկսաւ երեխի հետ լինել։

Մանկամարդ մայրը լռեց և միայն ժամանակ առ ժամանակ մի ծանր տանջանք, որ ոչ մի շարժումով կամ խօսքով չէր կարող դուրս ժայթքել, արտասուքի խոշոր կաթիլներ էր քամում նրա աչքերից։ Արտասուքը խիտ, սև արտևանունքի միջից դուրս ծորելով կաթիլ-կաթիլ, հանդարտ գլորւում էր նրա մարմարիոնի նման դժգոյն այտերի վրայով։

Գուցէ մօր սիրտը զգում էր, որ նորածին մանկան հետ աշխարհ էր եկել մի մութ, անփարատելի վիշտ, որը օրրանի վրայ կախուած՝ մինչև գերեզման պիտի ուղեկից լինէր այդ դեռաբոյս կեանքին։

Սակայն գուցէ և դա իրօք զառանցանք էր։ Այսպէս թէ այնպէս երեխան կոյր ծնուեց։

Π.

Սկզբում ոչ ոք չնկատեց այդ։ Մանուկը նայում էր այն աղօտ և անորոշ հայեացքով, որով առհասարակ մինչև մի որոշեալ ժամանակ նայում են բոլոր նորածինները։ Օրերը միմեանց ետևից անցնում էին. նորածինն արդէն մի քանի շաբթական էր։ Նրա աչքերը պարզուեցան, հայեացքի պղտոր փառն անցաւ և բիբը որոշուեց։ Բայց մանուկը գլուխը չէր դարձնում դէպի լուսաւոր ճառագայթի կողմը, որ թռչունների ուրախ ծլվլոցի ու հէնց պատուհանի առաջ, գիւղական խիտ պարտիզում տատանուող կանաչ ճաճարքենու սօսաւիւնի հետ թափանցում էր սենեակը։ Մայրն արդէն առողջացել էր և առաջինն ինքն եղաւ, որ վրդովուած նկատեց մանուկի դէմքի տարօրինակ արտայայտութիւնը, որ անշարժ էր և մի տեսակ ոչ մանկական լրջութիւն ունէր։

Նորատի կինը սարսափահար տատրակի նման նայում էր մարդկանց երեսին ու հարցնում.

—Ասացէք, ինչո՞ւ նա այդպէս է։

—Ինչպէ՞ս է որ,—անտարբերութեամբ հարցնում էին կողմնակի մարդիկ։—Նա ոչնչով չէ տարբերւում նոյն հասակի ուրիշ մանուկներից։

—Տեսէք, ի՞նչպէս նա տարօրինակ կերպով ձեռներով մի բան է որոնում...։

—Դեռ ևս մանուկը չէ կարողանում իւր ձեռների շարժումները տեսութեան տպաւորութիւններին համակերպել,—պատասխանեց բժիշկը։

—Բայց ինչո՞ւ միշտ մի՛ ուղղութեամբ է նայում...։ Նա... նա... կո՞յր է,—յանկարծ մօր կրծքից դուրս պրծաւ այդ սարսափելի կասկածը, և ոչ ոք չկարողացաւ նրան հանգստացնել։

Բժիշկը մանկանը իւր գիրկն առաւ, արագութեամբ լոյսի կողմը դարձրեց և աչքերին նայեցաւ։ Նա թեթեւակի շփոթուեց և մի քանի անանշան խօսքեր ասելով հեռացաւ՝ խոստանալով, որ երկու օրից կրկին կգայ։

Մայրը երեխին իւր կրծքին սեղմած լաց էր լինում ու գնդահար եղած թռչնի նման թրպրտում, իսկ մանկան աչքերը դարձեալ նոյն անշարժ և դժնի հայեացքն ունէին։

Բժիշկը, յիրաւի, երկու օրից եկաւ իւր հետ բերելով նաև աչադէտ գործիք։ Նա ճրագ վառեց, որը հեռացնում ու մօտեցնում էր մանուկի աչքերին, նայում էր նրանց և, վերջապէս, շփոթուած ասաց.

— Դժբաղդաբար, տիկին... դուք չէք սխալուել...։ Արդարև մանուկը կոյր է և այն էլ՝ անբուժելի...։

Մայրը հանգիստ թախիծով լսեց այդ տեղեկութիւնը։

— Ես այդ վաղուց գիտէի, — ասաց նա կամացուկ։

III

Այն ընտանիքը, որի մէջ աշխարհ եկաւ մանուկը, բազմանդամ չէր։ Բացի յիշեալ անձերից, նա բաղկացած էր նաև հօրից ու „քեռի Մակսիմից"՝ ինչպէս անուանում էին նրան ամենքը՝ թէ տնեցիք և թէ նոյն իսկ օտարները։ Հայրը նման էր Հարաւ-արևմտեան Ռուսիայի միւս հազարաւոր գիւղական կալուածատէրերին. նա մի բարեհոգի, կարելի է ասել բարի մարդ էր. լաւ պահում էր բանուորներին և շատ սիրում էր նոր աղօրիքներ շինել ու եղածները վերաշինել։ Այդ զբաղմունքը համարեա թէ ամբողջովին խլում էր նրա բոլոր ժամանակը, ուստի և նրա ձայնը տան մէջ միայն յայտնի, որոշեալ ժամերին էր լսւում, որը պատահում էր ճաշին, նախաճաշին ու համանման դիպուածներում։

Այդ ժամանակ նա միշտ այս միևնոյն անփոփոխելի նախադասութիւնն էր կրկնում. „ինչպէս ես, հոգիս, լա՛ւ ես“, որից յետոյ սեղան էր նստում և այլ ևս համարեա թէ ոչինչ չէր խօսում և հազիւ երբեմն մի որ և իցէ տեղեկութիւն կը հաղորդէր կաղնուց շինուած գլանի կամ ատամնաւոր անուի մասին։ Հասկանալի է, որ նրա խաղաղ ու անպաճոյճ գոյութիւնը շատ սակաւ պիտի արտացոլար իւր որդու հոգեկան կազմի վրայ։

Մինչդեռ քեռի Մակսիմը, դրա հակառակ, բոլորովին ուրիշ մարդ էր։ Մեր նկարագրած դէպքից մի տասը տարի առաջ քեռի Մակսիմը ամենավտանգաւոր կռուարարի հռչակ էր վայելում ոչ միայն իւր կալուածքի շրջակայքում, այլ և Կիևի „կոնտրակտներում“ [1])։ Բոլորն էլ զարմանում էին, թէ ինչպէս է եղել, որ ամենայն կողմից յարգելի մի ընտանիքի մէջ, ինչպիսին պանի [2]) Պոպելսկու (ի ծնէ Եացենկո) ընտանիքն էր, մի այդպիսի սարսափելի եղբայր էր դուրս եկել։ Ոչ ոք չգիտէր, թէ ինչպէս պէտք է նրա հետ վարուել և ինչո՞վ նրան հաճելի լինել։ Պաների հաճոյախօսութեան նա կոպտութեամբ էր պատասխանում, իսկ շինականների վրայ մի այնպիսի կամայականութիւն էր բանեցնում ու հետներն էլ այնպէս կոշտ վարուում, որ ամենախաղաղ շլեախտիչն [3]) անգամ անպատճառ ապտակներով կը պատասխանէր։ Վերջապէս քեռի Մակսիմը, ի մեծ ուրախութիւն բոլոր բարեմիտ մարդկանց, չգիտեմ ինչ բանի համար սաստիկ զայրանալով Աւստ-

---

[1]) Տեղական բարբառով „կոնտրակտ“ կոչւում էր Կիևի երբեմն հռչակաւոր տօնավաճառանոցը։ Ծ. Հ.

[2]) Լեհերէն պան նշանակում է պարոն, աղայ, պաննի—տիկին և օրիորդ, պանիչ—տիրոջ որդի։ Ծ. Թ.

[3]) Շլեախտիչ—լեհական ազնուական։ Շլեախտիչները XV դարում սկսան գերակշիռ դեռ խաղալ իրենց երկրի պատմու-

ջիացիների վրայ, գնաց Իտալիա. այնտեղ միացաւ իրենց նման խռովարար ու հերետիկոս Գարիբալդուն, [1]) որը, ինչպէս տեղական կալուածատէր—պանները զարհուրելով պատմում էին, սատանայի հետ եղբայրացած նոյն իսկ „պապեժին“ [2]) կոպէկի նշանակութիւն չէր տալիս։ Իհարկէ, Մակսիմն այսպէսով յաւիտենական կորբոտի մատնեց իւր անհանգիստ ու աղանդաւոր հոգին, բայց դրա փոխարէն „կոնտրակտները“ նուազ անկարգութիւններով էին վերջանում, իսկ շատ ազնիւ մայրիկներ էլ դադարեցան իրենց զաւակների վիճակի մասին անհանգիստ լինելուց։

Երևի աւտրիացիներն էլ խիստ գայրացած էին քեռի Մակսիմի վրայ։ Ժամանակ առ ժամանակ, կալուածատէր-պանների ի հնուց անտի սիրելի „Համբաւաբեր“ լրագրի հաղորդած տեղեկութիւնների մէջ Գարիբալդու ամենայանդուգն մարտիկների թւում յիշւում էր նաև քեռի Մակսիմի անունը, մինչև որ վերջապէս մի անգամ էլ պանները նոյն „Համբաւաբերից“ տեղեկացան, որ նա իւր ձիով ընկել է պատերազմի դաշտում։ Կատաղած աւստրիացիները, որ հաւանօրէն, վաղուց արդէն ատամ էին սրած այդ վնասաբեր վոլնցու [3]) վրայ (համարեա որի շնորհիւ, իւր հայրենակիցների ասելով, դեռ ևս կանգուն էր մնում Գարիբալդին), դմակի նման թիքայ-թիքայ էին արել նրան։

թեան մէջ և հայրենիքի կործանման պատճառ դարձան սոսկալի երկպառակութիւն ձգելով։ Ծ. Թ.

[1]) Գարիբալդին Իտալիայի ազատութեան և միութեան ամենանշանաւոր հերոսներից մէկն է. ծն. 1807 թ. վախճան. 1882 թ.

[2]) «Պապեժ», պապ, կաթոլիկ եկեղեցու պետը։ Ծ. Թ.

[3]) Վոլընն—հնում առանձին իշխանութիւն էր. միայն 1793 թ. անցաւ Ռուսիայի տիրապետութեան տակ. ներկայումս Վոլընսկայա նահանգի մեծ մասն է կազմում։ Ծ. Թ.

—Վատ վախճան ունեցաւ Մակսիմը, —ասացին պաներն ու այդ բանը վերագրեցին սուրբ Պետրոսի յատկապէս դէպի իւր տեղակալը ցոյց տուած հովանաւորութեանը։ Մակսիմին մեռած էին համարում։

Բայց բանից երևաց, որ աւստրիական թրերն անկարող էին եղել Մակսիմի միջից դուրս վանելու նրա յամառ հոգին, որը մնացել է նրա, թէև սաստիկ վնասուած, մարմնի մէջ։ Գարիբալդու խուովարարներն իրենց արժանաւոր ընկերակցին դուրս էին բերել կոտորածից, մի տեղ հիւանդանոց տարել, և ահա, մի քանի տարուց յետոյ, Մակսիմն անակնկալ կերպով եկաւ իւր քրոջ տունն, ուր և մնաց։

Այժմ արդէն մենամարտներն այլ ևս նրա բանը չէին։ Նրա աջ ոտը բոլորովին կտրուած էր, ուստի և անթացուպով էր մանգալիս, իսկ ձախ ձեռքը վնասուել ու միայն մի կերպով ձեռնափայտին յենուելու էր պէտք գալիս։ Նոյն իսկ ինքն աւելի լրջացել, խաղաղ բնաւորութիւն էր ստացել. և դեռ սուր լեզուն էր միայն, որ դեռ ևս ժամանակ առ ժամանակ անվրէպ գործում էր, ինչպէս երբեմն իւր սուրը։ Նա «կոնտրակտներ» գնալուց դադարեց, հասարակութեան մէջ շատ քիչ էր մտնում և ժամանակի մեծ մասն անց էր կացնում իւր ընթերցարանում գրքեր կարդալով, որոնց մասին ոչ ոք ոչինչ չգիտէր, միայն ենթադրում էին, թէ պէտք է որ դրանք անաստուածական գրքեր լինէին։ Նա մի բան էլ էր գրում, բայց որովհետև այդ գրուածքներն երբէք տեղական „Համբաւաբերի“ մէջ լոյս չէին տեսնում, ուստի և ոչ ոք լուրջ նշանակութիւն չէր տալիս դրանց։

Այն միջոցին, որ նոր էակը աշխարհ եկաւ գիւղական տան մէջ ու սկսեց աճել, արդէն արծաթագոյն ալիքը նոր-նոր սկսել էր երևալ քեռի Մակսիմի կարճ

խուզած մազերի մէջ։ Անթացուպերի անընդհատ ճնշումից նրա ուսերը վեր էին բարձրացել, մարմինը քառակուսի ձև ստացել։ Նրա օտարոտի կերպարանքը, կիտած խոժոռ յոնքերը, անթացուպերի թրխկոցը, ծխախոտի ծխի բարդերը, որոնցով նա միշտ շրջապատուած էր, որովհետև չիբուխը բերանից չէր բաց թողնում,— այս ամենը վախեցնում էր կողմնակի մարդկանց. միայն այդ անկար զինուորականին մօտիկ անձերը գիտէին, որ նրա այդ կտրատուած մարմնի մէջ բարի ու ջերմ սիրտ է բաբախում, իսկ խիտ ու կոշտ մազերով ծածկուած քառակուսի մեծ գլխի մէջ գործում է անհանգիստ միտքը։

Սակայն նոյն իսկ մօտիկ անձերն էլ չէին իմանում, թէ այդ միջոցին ինչ խնդրով էր զբաղուած նրա միտքը։ Նրանք միայն տեսնում էին, որ քեռի Մակսիմը, կապոյտ ծխով շրջապատուած, երբեմն ամբողջ ժամեր, միգամած հայեացքով ու խիտ յոնքերը խոժոռ կիտած, անշարժ մնում էր նստած։ Մինչդեռ հաշմանդամ մարտիկը մտածում էր, թէ կեանքը կռիւ է և նրա մէջ անկար մարտիկների համար տեղ չկայ։ Նա մտածում էր, թէ ինքն առ միշտ դուրս է ընկած մարտիկների շարքից և աւելորդ բեռն է դարձել վիրաւորեալների կառքի մէջ. նրան թւում էր, թէ ինքը նման է մի ասպետի, որին կեանքը ձիուց գլորելով հողին է հաւասարացրել։ Մի թէ փոքրոգութիւն չէ՞ ոտնատակ գնացած սողունի նման փոշու մէջ թաւալելը. փոքրոգութիւն չէ՞ յաղթականի ասպանդակը բռնած՝ նրանից իւր սեփական գոյութեան թշուառ մնացորդը աղերսագին խնդրել։

Մինչ քեռի Մակսիմը սառնասիրտ արիութեամբ քննում էր այս հրատապ միտքը՝ կշռադատելով ու համադրելով բոլոր թեր ու դէմ փաստերը, նրա աչքերի

առաջ սկսեց առփայլել նոր էակը, որին ճակատագիրն արդէն իսկ որոշել էր անկար ծնուել։ Սկզբում նա ուշադրութիւն չէր դարձնում կոյր երեխայի վրայ, բայց յետոյ, երեխայի ու իւր սեփական վիճակի տարօրինակ նմանութիւնը հետաքրքրեց նրան։

—Հը՛մ... հը՛,—մտախոհ ասաց նա աչքի ծայրով երեխային նայելով,—սա նոյնպէս անկար զինուոր է։ Եթէ երկուս միացնէին, իցէ թէ մի բանի պիտանացու մարդուկ դառնայինք։

Այնուհետև նրա հայեացքն աւելի ու աւելի յաճախ սկսեց կանգ առնել երեխայի վրայ։

IV

Երեխան կոյր ծնուեց։ Ո՞վ էր նրա դժբաղդութեան պատճառը։ Ոչ ոք։ Այստեղ ոչ միայն ում և իցէ „չար կամքի“ ստուերն իսկ չկար, այլ և հէնց դժբաղդութեան պատճառն էլ ծածկուած է կեանքի խորհրդաւոր և բարդ գործառնութիւնների մէջ, մի խոր տեղ։ Մինչդեռ ամեն անգամ, որ մայրը իւր կոյր որդուն չէր մտիկ տալիս, սիրտը սուր յաւից մորմոքում էր։ Ի հարկէ, սոյն դէպքում նա տանջւում էր որպէս մայր, որ իւր զաւակի տրատին կարեկից էր լինում և մռայլ կերպով նախազգում այն ապագան, որ սպասում էր մանուկին։ Սակայն բացի այս նախազգացումից նորատի կնոջ սրտի խորքում մարմաջում էր նաև այն գիտակցութիւնը, թէ դժբաղդութեան *պատճառը*, որպէս ահաւոր *հնարաւորութիւն*, գտնւում էր նրանց մէջ, որոնք կեանք էին տուել նրան...։ Այսքանս բաւական էր, որ գեղեցիկ, բայց լուսազուրկ աչքերով փոքրիկ էակը ընտանիքի կեդրոնը, նրա անգիտակցական բռնակալը դառնար և տան մէջ ամեն բան նրա ամենամանր քմահաճոյքներին յարմարէր։

Ո՛վ գիտէ ժամանակով ինչ դուրս գար այդ երեխայից, որ իւր քամբախտութեամբն արդէն անառիթ ցասկոտութեան էր տրամադրուած, և որի մէջ բոլոր շրջապատողներն էլ ձգտում էին եսամոլութիւն զարգացնել, եթէ որ տարօրինակ ճակատագիրն ու աւստրիական սրերը քեռի Մակսիմին չստիպէին գիւղ՝ իւր քրոջ մօտ տեղափոխուել։

Տան մէջ կոյր մանուկի ներկայութիւնը աստիճանաբար և անզգալապէս ուրիշ ուղղութիւն տուեց հաշմանդամ մարտիկի գործունեայ մտքերին։ Նա դարձեալ ամբողջ ժամեր նստում էր չիբուխը ծխելով, բայց այժմ նախկին խոր և բութ ցաւի տեղ նրա աչքերի մէջ հետաքրքիր դիտողի խորաքննին արտայայտութիւն էր երևում։ Եւ որքան քեռի Մակսիմը ուշի ուշով դիտում էր, այնքան յաճախ խոժոռում էին նրա խիտ յոնքերը և նա աւելի սաստիկ էր փուհ-փուհացնում իւր չիբուխը։ Վերջապէս նա մի անգամ վճռեց միջամտել.

—Այս երեխան,—ասաց նա ծուխն օղակ-օղակ թողնելով,—ինձանից անհամեմատ աւելի դժբաղդ է լինելու։ Երնէկ ծնուած չլինէր։

Նորատի կինը գլուխը կախ գցեց և արտասուքի կաթիլը գլորուեց նրա ձեռագործի վրայ։

—Քու կողմից խստասրտութիւն է, որ ինձ յիշեցնում ես այդ, Մակս,—ասաց նա ցած ձայնով.—Առանց նպատակի յիշեցնել...

—Ես ճշմարտութիւնն եմ ասում,—պատասխանեց Մակսիմը։—Ձեռք ու ոտք չունիմ, բայց աչք ունիմ։ Երեխան աչք չունի, իսկ ժամանակով էլ ոչ ձեռք կունենայ, ոչ ոտք, ոչ կամք...

—Ինչո՞ւ։

—Հասկացիր միտքս, Աննա,—աւելի քնքշութեամբ ասաց Մակսիմը։—Ի զուր տեղը քեզ խիստ բան չեմ

ասիլ։ Երեխան ջղային նուրբ կազմուածք ունի։ Առ այժմ դեռ ամենայն հաւանականութիւն կայ նրա միւս ընդունակութիւններն այն աստիճանի զարգացնելու, որ գէթ մասամբ կարող լինին նրա կուրութեան փոխարինել։ Բայց դրա համար վարժութիւն է հարկաւոր, իսկ վարժուել կարելի է միմիայն անհրաժեշտութիւնից ստիպուած։ Անմիտ հոգածութեամբ նրանից խլում է ուժգնութիւն գործ դնելու անհրաժեշտութիւնը, որով ոչնչանում է նրա մէջ եղած առաւել կատարեալ կեանք ունենալու հաւանականութիւնը։

Մակսիմի քոյրը խելացի կին էր, ուստի և կարողացաւ զսպել իւր մէջ այն անմիջական դրդմանը, որը, մանուկի ամեն մի ճիչը լսելիս, նրան ստիպում էր գլխապատառ դէպի նա վազել։

Այս խօսակցութիւնից մի քանի տմիս յետոյ երեխան ազատ և արագ չոչ էր անում սենեակներում, ամեն մի ձայնի վրայ ականջը սրում և մի տեսակ, ուրիշ երեխաներին ոչ-յատուկ արագութեամբ շօշափում էր ձեռքն ընկած ամեն մի առարկայ։

V

Նա շատ շուտով սկսաւ իւր մօրը ճանաչել նրա քայլուածքից, շորի խշշոցից և էլի մի տեսակ, միայն իրեն մատչելի, իսկ ուրիշներին անըմբռնելի նշաններից.—որքան ուզում է սենեակում մարդ լինէր, որ կողմն ուզում է տեղափոխուէին, դարձեալ նա միշտ առանց վրիպելու այն կողմն էր ուղղում, ուր որ իւր մայրն էր նստած լինում։ Երբ որ մայրն անակնկալ կերպով խտտում էր նրան, նա իսկոյն հասկանում էր, որ մօր գրկումն է։ Բայց երբ ուրիշներն էին խտտում, մանուկը իւր թաթիկներով արագապէս շօշափում էր իրեն գրկողի դէմքը. նա նոյնպէս շուտով ճանաչում

էր դայեակին, քեռի Մակսիմին, հօրը։ Իսկ երբ անծանօթ մարդու ձեռք էր ընկնում, այն ժամանակ մանրիկ ձեռների շարժումներն աւելի դանդաղանում էին. երեխան զգուշութեամբ և ուշադրութեամբ ձեռները ման էր ածում անծանօթ դէմքի վրայով և այդ միջոցին նրա դէմքի գծերը լարուած ուշադրութիւն էին արտայայտում. նա, ասես թէ, իւր մատների ծայրիկներով խորամուխ եղած „մտիկ էր տալիս“։

Նա բնութեամբ շատ առոյգ և աշխոյժ երեխայ կը դառնար. բայց ամիսները յաջորդում էին իրար և կուրութեան կնիքը աւելի ու աւելի դրոշմւում էր մանկան խառնուածքի վրայ, որ սկսել էր որոշ կերպարանք ստանալ։ Շարժումների աշխուժութիւնը կամաց-կամաց անհետանում էր. նա սկսեց առանձնացած անկիւններ քաշուել, ուր ամբողջ ժամեր նստում էր հանգիստ, դէմքի գծերը սառած. ասես թէ մի բանի ականջ դնելիս լինէր։ Երբ սենեակում խաղաղ էր լինում և իրար փոխանակող բազմազան ձայները նրա ուշադրութիւնը չէին գրաւում, նա, վարանմունքն ու ապշութիւնը իւր գեղեցիկ և ոչ-մանկական լուրջ դէմքին, կարծես թէ մի բան էր խորհում։

Քեռի Մակսիմը գլխի ընկաւ. մանուկի ջղային նուրբ և հարուստ կազմուածքը գեր ի վեր էր հանդիսանում և ասես թէ շօշափման ու լսելիքի զգայութիւնների ըմբռնողութեամբ ձգտում էր մի որոշ չափով իւր տպաւորութիւնների պակասորդը լրացնել։ Նրա շօշափողութեան զարմանալի նրբութիւնն ապշեցնում էր բոլորին։ Մինչև անգամ ժամանակ-ժամանակ այնպէս էր թւում, թէ նոյն իսկ գոյների ըմբռնողութիւնն էլ օտար չէր նրա համար՝—երբ նրա ձեռքը պայծառ գոյնի կտորտանք էին ընկնում, նա իւր բարակ մատներն աւելի երկար էր պահում նրանց վրայ

և զարմացած ուշադրութեան արտայայտութիւն էր անցնում նրա դէմքի վրայ։ Սակայն, ժամանակ անցնելով, աւելի ու աւելի պարզուեց, որ առաւելապէս նրա ականջի ըմբռնողութիւնն է զարգանում։ Նա շուտով կատարելապէս ուսումնասիրեց սենեակները՝ նրանց արձակած ձայներից, զանազանում էր տնեցիների քայլուածքը, անկար զինուորական քեռու սթոռի ճռռճռռոցը, իւր մօր ձեռքի դերձանի համաչափ, խուլ շշուկը, պատի ժամացոյցի համահաւասար չխչխկոցը։ Երբեմն, պատի երկարութեամբ սողալով, ուշադրութեամբ ականջ էր դնում ուրիշների համար անլսելի թեթև շշուկին և ձեռքը բարձրացնելով մեկնում էր պատի ծաղկաթղթի վրայ վազող ճանճի ետևից։ Երբ ճանճը վախեցած վեր էր կենում տեղից և թռչում էր, ցաւագար տարակուսանքի արտայայտութիւն էր երեւում կոյրի երեսին։ Նա չէր կարողանում ճանճի խորհրդաւոր անհետացման մասին հաշիւ տալ իրեն։ Բայց վերջերին այդպիսի դէպքերում էլ նրա դէմքը պահպանում էր խելացի ուշադրութեան արտայայտութիւնը. նա գլուխը շուռ էր տալիս ճանճի թռած կողմը. նրա սուր ականջն իսկոյն ըմբռնում էր օդի մէջ ճանճի թեւերի պատճառած նուրբ ձայնը։

Կոյրին շրջապատող ցոլուն, հնչող ու շարժուն աշխարհը գլխաւորապէս ձայնի ձևով էր թափանցում նրա փոքրիկ գլխի մէջ և այդ ձևերով էլ ձուլւում էին նրա մտապատկերները։ Մի առանձին արտայայտութիւն սառչում—մնում էր նրա դէմքի վրայ, այնպիսի արտայայտութիւն, որ բնորոշ է լսելու համար լարուած ուշադրութեանը՝—ներքին ծնօտը թեթևակի ձգւում էր, յոնքերը կիտւում, գլուխը խոնարհում ու երկարած բարակ վզի վրայ առաջ մեկնում։ Այդ միջոցին գեղեցիկ, բայց անշարժ մնացած աչքերը մի տե-

սակ դժնի և միանգամայն սրտաշարժ տեսք էին տալիս կոյրի դէմքին։

VI

Կոյր մանկան կեանքի երկրորդ ձմեռը իւր վախճանին էր մօտենում։ Դուրսը ձիւնն արդէն հալւում էր. գարնանային վտակները խոխոջում էին, իսկ միևնոյն ժամանակ մանուկն էլ, որ ամբողջ ձմեռը տկարութեան պատճառով սենեակից չէր դուրս եկել և մաքուր օդի երես չէր տեսել, սկսաւ կազդուրուել։

Պատուհանների երկրորդ փեղկերը վերցրին և գարունը կրկնապատկած ուժով ներս խուժեց սենեակը։ Գարնանային զեղածիծաղ արեգակը նայում էր լուսազեղ պատուհաններից, աճարքենու տակաւին մերկ ճիւղերն օրօրւում էին. հեռուն սևին էին տալիս արտերը, որոնց վրայ տեղ-տեղ երևում էին հալչող սպիտակ ձիւնի բծերը, իսկ տեղ-տեղ էլ հազիւ նշմարելի կերպով երևում էր նորածիլ կանաչ արօտը։ Ամենայն ինչ առաւել ազատ և ուրախ էր շնչում, ամենքի վրայ էլ գարունը վերանորոգուած և կենսական առոյգ ոյժի հոսանք էր արտափայլում։

Կոյր մանուկի համար գարունը միայն իւր ճեպընթաց աղմուկի ձևով էր սենեակ մտնում։ Նա լսում էր, թէ ինչպէս գարնանային ջրերից կազմուած վտակները քարերի միջից թռչկոտալով, ասես թէ իրար ետեւից ընկած, վազում էին փափկած հողը խոր պեղելով. պատուհանների միւս կողմը աճարքենիքն իրար ընդհարուելով շշնջում էին միմեանց հետ և ապակիներին թեթևակի դիպչելուց չիկչիկում։ Իսկ տանիքից կախ ընկած սառցի կտորներից թափուող գարնանային կաթիլները, որ առաւօտեան վերահաս ցրտից սառել ու այժմ արևից հալուել էին, հազարաւոր հնչուն ձայներ

արձակելով շտապ-շտապ գլորւում էին ցած։ Այս ձայ-ները սենեակն էին թափանցում նման լատակի վրայ շաղ ձգուող պայծառ ու քաջահնչիւն մանրիկ քարի կտորտանքի, որ արագօրէն միաձուլուող բեկբեկ ձայ-ներ են արձակում։ Ժամանակ առ ժամանակ այս աղ-մուկի ու ղողանջիւնների միջով հեռաւոր բարձունքից ներդաշնակ կերպով հասնում էին կռունկների կռըն-չիւնն ու կամաց-կամաց լռում. հէնց իմանաս հան-դարտ հալուելիս լինէին օդի մէջ։

Բնութեան այս վերակենդանացումը ցաւագար վա-ղանմունքի ձևով էր արտայայտւում մանուկի դէմքի վրայ։ Նա ճիգ թափելով կիտում էր յոնքերը, վիզը ձգում, ականջ դնում և այնուհետև, կարծես ձայների անհասկանալի խռնումից խռովուած, յանկարծ, մօրը որոնելով, մեկնում էր ձեռքը և գիրկն ընկնելով պինդ սեղմւում նրա կրծքին։

—Այս ինչ է եղել սրան,—հարցնում էր մայրն ինքն իրեն և ուրիշներին։

Քեռի Մակսիմն ուշադրութեամբ դիտում էր մա-նուկի դէմքը և չէր կարողանում բացադրել նրա ան-հասկանալի վրդովմունքը։

—Նա... չէ կարողանում հասկանալ,—գլխի էր ընկնում մայրը՝ իւր որդու դէմքին ցաւագար վարան-ման և հարցական արտայայտութիւն նկատելով։

Արդարև խռովուած ու անհանգիստ էր երեխան. նա մերթ աշխուժով նոր հնչիւններ էր ըմբռնում, մերթ զարմանում, որ առաջուայ հնչիւնները, որոնց նա արդէն սկսել էր ընտելանալ, յանկարծ լռում էին և գնում մի տեղ կորչում։

VII

Գարնանային խառնափնթորութեան քաոսը լռեց։

Արևի ջերմ ճառագայթների տակ բնութեան աշխատանքն աւելի ու աւելի կանոնաւոր ընթացք էր ստանում. կեանքն ասես թէ լարւում էր. նրա առաջխաղաց ընթացքն աւելի սրարշաւ էր դառնում՝ երկաթուղու ճեպընթաց գնացքի նման։ Նորաբոյս արօտն սկըսեց մարգագետիններում կանաչել. կեչու կոկոնների հոտը փռուել էր օդի մէջ։

Որոշեցին մանկանը մօտակայ գետի ափը՝ դաշտանել։ Մայրը իւր որդու ձեռքիցն էր բռնած։ Կողկից, իւր անթացուպերին հեցած, գնում էր քեռի Մակսիմը. նրանք դէպի գետափնեայ բլրակն էին դիմում, որն արդէն բաւական չորացել էր արևից ու քամուց։ Բլուրը խիտ արօտի դալարի մէջ ծփում էր. այդ տեղից մարդու առաջ բացւում էր Հեռաստանի տեսարանը։

Պայծառ. օրուայ լոյսը խփեց մօր և Մակսիմի աչքերին։ Արևի ճառագայթները տաքացնում էր նրանց դէմքը. գարնանային քամին. կարծես իւր անհերևոյթ թևերը տատանելով քշում, հեռացնում էր այդ ջերմութիւնը և նրա տեղ թարմ զովութիւն տալիս։ Օդը յագեցած էր մի բանով, որ քնքշանքի, խոնջութեան աստիճան արբեցուցիչ էր։

Մայրն զգաց, թէ ինչպէս մանկան փոքրիկ ձեռքը պինդ սեղմուեց իւր ձեռքի մէջ, բայց գարնան արբեցուցիչ հունչը նրան նուազ զգայուն էր դարձրել այս մանկական յուզման արտայայտութեան համար։ Նա լիակուրծն շնչում էր և առանց յետ նայելու առաջ գնում։ Սակայն եթէ նա ետևը դառնար, մի օտարոտի արտայայտութիւն պիտի տեսնէր մանկան դէմքի վրայ։ Երեխան համր ապշութեամբ իւր բաց աչքերը դէպի արևն էր դարձնում։ Նրա շրթունքները բացուել էին. նա ջրից հանած ձկան նման, արագ ամպե-

րով կուլ էր տալիս օդը. մերթ ընդ մերթ ցաւագար հիացման արտայայտութիւնը դուրս էր ցայտում նրա անօգ-շուար դէմքի վրայ, մի տեսակ նեարդային բաղխումներով անցնում էր դէմքի վրայից՝ առ վայրկեան մի լուսաւորելով նրան, և անմիջապէս նորից տեղի տալիս երկիւղի և անգիտակ հարցման աստիճանին հասած զարմացման արտայայտութեան։ Միայն աչքերն էին միևնոյն միապաղաղ և անշարժ անլոյս հայեացքով մըտիկ տալիս։

Բլրակին հասնելով երեքն էլ միասին նստան գետնին։ Երբ մայրը մանկան աւելի յարմարաւոր կերպով նստեցնելու դիտաւորութեամբ նրան բարձրացրեց գետնից, մանուկը դարձեալ ջղաձգաբար նրա շրջազգեստից բռնեց. ասես թէ նա իւր տակ հող ՝զգալիս չլինէր և վախենում էր, թէ մի գուցէ մի տեղ գահավէժ լինի։ Բայց մայրն այս անգամ էլ չնկատեց նրա խռովայոյզ շարժումը, որովհետև նրա աչքերն ու ուշադրութիւնը գարնանային հրաշալի պատկերին էին յառած։

Կէս օր էր։ Կապոյտ երկնակամարի վրայ հանդարտ գլորւում էր արևը։ Բլրից, ուր նրանք նստած էին, երևում էր սաստիկ յորդացած գետը. նա արդէն քշել տարել էր իւր սառցի կտորները և միայն ժամանակ առ ժամանակ ջրի երեսին տեղ-տեղ լողում ու հալչում էին նրանց վերջին մնացորդները, ՝որ սպիտակ բծի նման աչքի էին ընկնում։ Փոս ընկած մարգագետիններում ջուրը լցուած՝ ընդարձակ ծովածոցեր էր կազմել. փոքրիկ սպիտակ ամպերը շուռ ընկած կապուտակ երկնակամարի հետ արտափայլելով նրանց մէջ, հանդարտ լողում էին ջրի խորքում ու անհետանում, ասես թէ նրանք էլ սառցի բեկորների նման հալչելիս լինէին։ Երբեմն-երբեմն արևի տակ լողալով սահում, անցնում էր քամուց առաջացած թեթև ծուփը։ Հեռուն, գետի

միւս կողմը, սևին էին տալիս ցելերը, որոնցից բարձրացող գոլորշին տատանուտ ու թափանցիկ մշուշ կազմելով ծածկում էր թէ հեռուն գտնուած յարդածածկ խրճիթները և թէ սևին տուող անտառի կապոյտ շերտը։ Կարծես երկիրը շունչ էր առնում, և նուիրական խնկան ծխի նման բարդ-բարդ մի բան վերառաքում դէպի երկինք։

Բնութիւնը, որպէս տօնախմբութեան համար պատրաստուած մեծ տաճար, փռուել էր շուրջանակի։ Սակայն կոյրի համար դա անպարփակելի խաւար էր միայն, որ անսովոր կերպով ալեկոծւում, շարժւում, դըղորդ հանում և հնչում էր իւր շուրջը՝ ձգուել-երկարելով դէպի նա, ամենայն կողմից հպելով նրա հոգուն դեռ չփորձած, անսովորական տպաւորութիւններով, որոնց զեղումից ցաւագար բաբախում էր մանկական սիրտը։

Հէնց առաջին քայափոխից, որ տաք օրուայ ճառագայթները նրա երեսին դիպան, քնքուշ մորթը տաքացրին, նա իւր անլոյս աչքերը դէպի արևն էր դարձնում կարծես զգալով, թէ դէպի ո՞ր կեդրոնն է ձգտում իրեն շրջապատող ամենայն ինչ։ Նրա համար ոչ այս թափանցիկ հեռաստանը գոյութիւն ունէր, ոչ կապուտակ երկնակամարը, ոչ լայնածաւալ հորիզոնը։ Նա միայն զգում էր, թէ ինչպէս մի տեսակ նիւթական, փաղաքուշ և ջերմ բան քնքուշ, տաքացնող հպումով շոշափում էր իւր դէմքը։ Այնուհետև զովարար և թեթև մէկը, թէև աւելի նուազ թեթև քան արևի ճառագայթների ջերմութիւնը, իւր դէմքից հեռացնում էր այդ քնքշանքը և թարմ զովութիւն պատճառելով անցնում նրա վրայից։ Մանուկը սենեակներում շուրջանակի դատարկութիւն զգալով՝ վարժուած էր ազատ շարժուելու։ Բայց այստեղ նրան պատեցին մի տեսակ

մերթ քնքշաբար գուրգուրող, մերթ խտուտ ածող ու արբեցուցիչ ալիքները, որոնք զարմանալի կերպով յաջորդում էին իրար։ Ասես թէ մէկը արագութեամբ հալածելիս լինէր արևի տաքացնող հպումները, մինչ քամու հոսանքը հնչելով նրա ականջի մէջ՝ շրջապատում էր նրա դէմքը, քունքերը, գլուխը՝ մինչի ծործորակը, շրջապատում էր նրան չորս բոլորքից. կարծես թէ աշխատում էր խլել մանուկի գիտակցութիւնը և մոռացութեան խոնջութիւն ձգելով վրան՝ ընդգրկել նրան, յափշտակել, տանել տարածութեան մէջ մի տեղ, որ ինքը չէր տեսնում սակայն։ Ահա այդ ժամանակ երեխի ձեռքը պինդ սեղմում էր մօր ձեռքը, իսկ սիրտը մարում էր և, ասես՝ թէ հէնց այն է՝ բաբախելուց պիտի դադարի բոլորովին։

Երբ նրան նստացրին, փոքր ինչ հանգստացաւ կարծես։ Այժմ, չնայելով որ նրա ամբողջ էութիւնը լցուած էր տարօրինակ զգացողութեամբ, բայց և այնպէս կարծես թէ սկսել էր առանձին հնչիւնները տարբերել։ Մութ, գուրգուրող ալիքներն անարգել սլանում էին առաջուայ պէս և նրան թւում էր, թէ դրանք մտնում են իւր մարմնի ներսը, որովհետև իւր և եկող տրեան բաբախումներն այդ ալիքների բաղխումների հետ էին բարձրանում ու իջնում։ Բայց այժմ դրանք մերթ արտուտի պայծառ գեղգեղանքն էին բերում իրենց հետ, մերթ կանաչած փոքրիկ կեչու մեղմ սօսաւիւնը և մերթ գետի հաղիւ լսելի ճղփիւնը։ Ծիծեռնակը մօտակայքում զարմանազան բոլորակներ գծելով օդի մէջ՝ սուլում էր թեթև թևով, տզզում էին մրժղուկներն և այս ամենի վրայից երբեմն-երբեմն լսւում էր գութանաւորի երկարաձիգ ու տխուր հորովելը, որ կէս վերստ հեռուն հերկի վրայ իւր ձիերին դահ էր անում։

Բայց երեխան չէր կարողանում այս հնչիւններն ըմբռնել, չէր կարողանում նրանց միացնել, մի համատեղի (պերսպեկտիւ) մէջ դասակարգել։ Դրանք մերթ խաղաղ, անորոշ, մերթ բարձրագոչ, պայծառ, խլացուցիչ կերպով միմեանց ետևից կարծես ընկնում, թափանցում էին նրա փոքրիկ խաւար գլխի մէջ։ Երբեմն-երբեմն էլ նրանք միաժամանակ խռնւում էին և անհաճոյ միաւորմամբ անհասկանալի աններդաշնակութիւն կազմում։ Իսկ դաշտերից փչող քամին շարունակ սուլում էր նրա ականջին և նրան թւում էր, թէ ալիքներն աւելի արագ են վազում և ծածկում բոլոր միւս ձայները, որոնք այժմ կարծես մի այլ աշխարհից էին գալիս և երէկեան աւուր յիշողութեան տպաւորութիւն էին անում։ Եւ քանի ձայները նսեմանում էին, այնքան էլ մի տեսակ խտխտող խոնջանքի զգացողութիւն զեղւում էր երեխի կրծքի մէջ։ Դէմքը ջղայնօրէն ձգձգւում էր, աչքերը մերթ փակւում էին, մերթ նորից բացւում, և բոլոր գծագրութեան վրայ երևում էր հարցում, մտքի և երևակայութեան ծանր ճիգ։ Նրա դեռ անկայուն և նորանոր զգացողութիւններով զեղուն գիտակցութիւնը սկսում էր ընկճուել. այդ գիտակցութիւնը դեռ մաքառում էր ամեն կողմից ներս խուժող տպաւորութիւնների դէմ՝ աշխատելով կանգուն մնալ նրանց միջև, նրանց ի մի ամբողջութիւն ձուլել և այդպէսով տիրանալ նրանց, յաղթահարել նրանց։ Բայց այդ բանը մանկան խաւար ուղեղի ուժից բարձր էր. այդ աշխատանքի համար նրան տեսողական պատկերացումը պակասում էր։

Եւ ձայներն իրար ետևից թռչում, ընկնում էին դեռ էլի չափազանց խայտաբղէտ, չափազանց հնչական կերպով...։ Մանկան պաշարող ալիքներն աւելի՛ ու աւելի ուժգնութեամբ վեր էին բարձրանում՝ դուրս թըռ-

չելով շրջապատող հնչական և աղմկալի խաւարից և կրկին նոյն խաւարի մէջ գնալով տեղի տալիս նորանոր ալիքների, նորանոր հնչիւնների...։ Նրանք աւելի արագ, աւելի բարձր, աւելի չարատանջ կերպով բարձրացնում էին նրան, տարուբերում, օրօրում...։ Մի անգամ էլ այս նսեմացնող քաօսի վրայով անցաւ մարդկային ձայնի երկար ու տխուր հնչիւնը և ապա յանկարծ ամեն ինչ լռեց։

Երեխան թեթևակի հառաչեց և մէջքի վրայ վէր ընկաւ արօտի մէջ։ Մայրն արագութեամբ շուռ եկաւ նրա կողմը և նոյնպէս աղաղակեց՝—մանուկը ժժգոյն, ուշաթափ պառկած էր արօտի վրայ։

VIII

Այս դէպքը սաստիկ վրդովեց քեռի Մակսիմին, Մի քանի ժամանակից ի վեր նա սկսել էլ բնախօսութեան, հոգեբանութեան և մանկավարժութեան վերաբերեալ գրքեր բերել տալ և իրեն յատուկ եռանդով ուսումնասիրել այն ամենը, ինչ որ գիտութիւնը տալիս է մանկական հոգու խորհրդաւոր աճման ու զարգացմամբ վերաբերմամբ։

Այս զբաղմունքն աւելի ու աւելի գրաւում էր նրան և այդ պատճառով էլ կեանքի կռուի համար ապիկար լինելու, «փոշու մէջ թաւալող որդի», և „զինուորական հիւանդաբարձ կառքի“ մասին մռայլ մըտքերն արդէն վաղուց աննկատելի կերպով ցնդել էին ծեր զինուորականի քառակուսի գլխից։ Դրանց տեղը մտախոհ ուշադրութիւնն էր բռնել այդ գլխի մէջ. մինչև անգամ երբեմն-երբեմն նոյն իսկ վարդակարմիր անուրջքներ ջերմացնում էին նրա ծերացող սիրտը։ Քեռի Մակսիմն աւելի ու աւելի համոզւում էր, որ բնութիւնը մանկանը տեսութիւն զլանալով, ուրիշ

կողմերից չէր զրկել նրան. դա մի էակ էր, որ զարմանալի լրութեամբ և ոյժով ըմբռնում էր իրեն մատչելի եղած արտաքին տպաւորութիւնները։ Եւքեռի Մակսիմին թւում էր, թէ ինքը կոչուած է զարգացնելու մանկան ընդոծին ընդունակութիւնների սաղմերը, որպէս զի մտքի ճիգով և իւր ազդեցութեամբ հաւասարակշռէ կոյր բաղդի անիրաւութիւնը, որպէս զի կեանքի մէջ արդար գործի մարտիկների մէջ իրեն փոխարէն դնէ մի նորակոչ զինուոր, որի վրայ ոչ ոք երբէք ոչինչ յոյս չպիտի ունենար, եթէ իւր ազդեցութիւնը չլինէր։

„Ո՛վ գիտէ,—մտածում էր Գարիբալդիի գնդի ծերունի զինուորականը,—նիզակով ու սրով հօ չեն կռուում միայն։ Գուցէ սա, որ անարդար կերպով զրկուած է բաղդից, ժամանակով իրեն մատչելի զէնքը բարձրացնէ ուրիշներին, կեանքի մէջ բաղդազուրկներին պաշտպանելու համար, և այն ժամանակ զուր ապրած չեմ լինիլ աշխարհում ես, որ հաշմանդամ ծերունի զինուոր եմ...“։

Նոյն իսկ քառասնական և յիսնական թուականների ազատախոհներն էլ զերծ չէին „բնութեան խորհրդաւոր նախասահմանութիւնների“ մասին եղած սնոտիապաշտութիւնից։ Ուստի զարմանալի չէ, որ քանի մանուկը զարգանում էր և աւելի ու աւելի արտակարգ ընդունակութիւններ ցոյց տալիս, այնքան էլ քեռի Մակսիմը համոզւում էր, որ հէնց կուրութիւնն էլ այդ „խորհրդաւոր նախասահմանութեան“ արտայայտութիւններից մէկն է։ „Բաղդազուրկը՝ զրկանք կրողների համար“—ահա այն նշանաբանը, որ նա նախապէս գրել էր իւր սանիկի մարտադրօշի վրայ։

IX

Մանուկը, գարնանային առաջին զբօսանքից յետոյ, մի քանի օր զառանցանքի մէջ էր։ Նա մերթ անշարժ ու լուռ էր մնում իւր անկողնի մէջ, մերթ մի բան էր փնթփնթում ու մի բանի ականջ դնում։ Եւ այդ բոլոր ժամանակը վարանման բնորոշ արտայայտութիւնը չէր հեռանում նրա դէմքից։

—Ճշմարիտ, նա այնպէս է մտիկ անում, հէնց իմանաս աշխատում է մի բան հասկանալ՝ բայց չէ կարողանում,—ասում էր նորատի մայրը։

Մակսիմի մտքի մէջ էր ընկնում և գլուխը շարժում։ Նա հասկացաւ, որ մանկան տարօրինակ յուզումը և անակնկալ նուաղելը բացադրւում էր տպաւորութիւնների առատութեամբ, որոնց նրա գիտակցութիւնն անզօր էր կարգի բերել, ուստի վճռեց այնպէս անել, որ առողջացող մանուկն այդ տպաւորութիւններն աստիճանաբար, այսպէս ասած, իրենց բաղադրիչ մասերին բաժանուած ստանայ։ Հիւանդի պառկած սենեակի պատուհանները պինդ փակած էին։ Այնուհետև, քանի նա կազդուրւում էր, պատուհաններն էլ առ ժամանակ բաց էին անում. ապա նրան ման էին ածում միւս սենեակներում, դուրս էին տանում սրահը, բակը, պարտէզը։ Եւ ամեն անգամ, որ կոյրի երեսին վրդովմունք էր արտայայտւում, մայրը նրան բացադրում էր նրան զարմացնող ձայները։

—Այդ հովուի փողն է հնչում անտառի ետևից,—ասում էր նա,—իսկ այս ծտերի երամի ճռուողի միջից թխկատարի ձայնն է լսւում...։ Արագիլն է կռանչում իւր անուի [1]) վրայ նստած։ Նա հէնց նորերս

---

[1]) Մալառուսիայում և Լեհաստանում արագիլների համար երկար սիւներ են տնկում ու վրան հին անիւ անց կացնում.

հեռաւոր երկրներից թռել-եկել է ու իւր նախկին տեղում բուն դնում։

Եւ մանուկը իւր երախտագիտութեամբ փայլող երեսը դարձնում էր մօրը, բռնում էր նրա ձեռքը, գլխով անում ու շարունակում էր մտախոհ և խելացի ուշադրութեամբ ականջ դնել։

X

Մանուկն ամեն բան, որ իւր ուշադրութիւնը գրաւում էր, հարց ու փորձ էր անում, և մայրը. բայց աւելի յաճախ քեռի Մակսիմը, նրան պատմում էր այս կամ այն ձայնն հանող զանազան առարկաների կամ կենդանիների մասին։ Մօր պատմածները. որ աւելի կենդանի ու վառ էին լինում, աւելի էլ տպաւորութիւն էին գործում մանկան վրայ. սակայն այդ տպաւորութիւնն երբեմն շատ ցաւատանջ էր լինում։ Նորատի կինը, ինքն էլ տանջուելով, խանդակաթ դէմքով, անդօր գանգատաւոր և վշտահար աչքերով աշխատում էր իւր մանկանը գաղափար տալ գոյների ու ձևերի մասին։ Երեխան լարում էր ուշադրութիւնը, յոնքերը կիտում. մինչև անգամ մանր կնճիռներ էին երևում նրա ճակատին։ Երևում էր, որ մանկական գլուխը աշխատում էր իւր ոյժից վեր մի խնդիր լուծել. նրա խաւար երևակայութիւնը չարչարւում էր՝ ջանալով անուղղակի հիմունքներով նոր մտապատկերներ ստեղ-

---

ահա դրա վրայ է թռչունը իւր բունը դնում։ Թ. Հ.

Հայաստանի գիւղերումն ևս չեն ցանում արդիլին բուն չինելու համար յարմարութիւններ տալ և երբէք նրա բունը չեն քանդում, նրան վնաս չեն տալիս. մեղք է։ Եւ արդարևարագիլը գիւղացու ցանքսի համար ամենաօգտակար թռչունն է. նա ոչնչացնում է վնասակար միջատները։ Ծ. Թ.

ծել, բայց ոչինչ չէր դուրս գալիս։ Այդպիսի դէպքերում քեռի Մակսիմը միշտ դժգոհութեամբ խոժոռում էր դէմքը. իսկ երբ արտասուքը դուրս էր ցայտում մօր աչքերից և իսկ մանկան դէմքը կեղրոնացած ճըգունքից գունատւում էր, նա ինքն էլ միջամտում էր խօսակցութեանը, քրոջը հեռացնում և իւր պատմութիւններն էր սկսում։ Նա իւր այդ պատմութիւնների մէջ որքան հնարաւոր էր միայն տարածական ու ձայնական պատկերացման օգնութեան էր դիմում։ Կոյրի դէմքն աւելի հանգիստ կերպարանք էր ստանում։

—Բայց ինչպէս է, մեծ է,—հարցնում էր նա արագիլի մասին, որ իւր սեան վրայ նստած թմբկի դանդաղ բեկբեկուն ձայներ էր արձակում։

Եւ երեխան բաց էր անում իւր թեւերը։ Նա սովորաբար այդպիսի հարցմունքների միջոցին իւր թեւերը կամաց կամաց հեռացնում էր իրարից, իսկ քեռի Մակսիմը նրան յայտնում էր, թէ ինչպէս պէտք է կանգառնէր։ Այժմ նա բոլորովին բաց էր արել իւր փոքրիկ թեւերը. բայց քեռի Մակսիմն ասաց.

—Ոչ, նա աւելի մեծ է։ Նրան որ ներս բերենք ու յատակի վրայ դնենք՝ գլուխը տթոռի մէջքից բարձր կը լինի։

—Մեծ...,—մտախոհ ասաց երեխան։—Իսկ թրխկատարը—ըհը՛,— և նա իւր միացրած ափերը փոքր ինչ հեռացրեց իրարուց։

—Այո, թրխկատարն այդչափ էր...։ Բայց դրա փոխարէն մեծ թռչուններն էլ երբէք այնքան լաւ չեն երգում, ինչքան փոքրները։ Թրխկատարն աշխատում է, որ իւր երգը բոլորին էլ հաճելի լինի։ Իսկ արագիլը լուրջ թռչուն է. նա իւր բոյնի մէջ մի ոտի վրայ կանգնած դիտում էր իւր չորս կողմը, հէնց գիտենաս իւր բանուորների վրայ չարացած տէր լինի, բարձրա-

ձայն քրթմնջում է առանց ուշադրութիւն դարձնելու, որ իւր ձայնը խռպոտ է և ուրիշներն էլ կարող են լսել։

Մանուկն այս նկարագրութիւնները լսելով ծիծաղում էր զուարթագին և առ ժամանակ մոռանում մօր պատմածները հասկանալու համար արած իւր ծանր փորձերը։ Սակայն թէև այս պատմութիւնները նրան աւելի էին գրաւում, բայց նա իւր հարց ու փորձերով աւելի մօրն էր դիմում, քան թէ քեռի Մակսիմին։

Բ. ԳԼՈՒԽ.

I

Մանկան խաւար գլուխը հարստանում էր նորանոր մտապատկերներով. խիստ նրբացած լսողութեան շնորհիւ նա աւելի ու աւելի խորն էր թափանցում իրեն շրջապատող բնութեան մէջ։ Առաջուայ նման խորին, անթափանց խաւարը տիրած էր վերևն ու շուրջը. այս խաւարը սևաթոյր ծանր ամպի նման կախուած էր նրա ուղեղի վրայ, և թէև դա ծննդեան օրից էր պատած նրան, թէև ըստ երևոյթին, մանուկն արդէն պէտք է ընդելացած լինէր իւր դժբաղդ վիճակին, սակայն մանկական բնոյթը մի տեսակ բնազդով անդադար ճիգ էր թափում այդ մռայլ քօղից ազատուելու։ Դէպի անյայտ լոյսը խոյանալու այս անգիտակցական ուժգնութիւնները, որ ոչ մի բոպէ մանուկից չէին հեռանում, անորոշ, տանջուող ճգունքի արտայայտու-

թեան ձևով աւելի ու աւելի խորը տպաւորւում էր նրա դէմքի վրայ։

Բայց և այնպէս նրա համար էլ էին լինում պարզ գոհունակութեան, մանկական պայծառ ցնծութեան րոպէներ. և այդ պատահում էր այն ժամանակ, երբ որ նրան մատչելի արտաքին տպաւորութիւնները նոր, զօրեղ զգացողութիւն էին պատճառում նրան, անտեսանելի աշխարհի նոր երևոյթների հետ էին ծանօթացնում։ Մեծ և զօրեղ բնութիւնը լիովին փակուած չէր մնում կոյրի առաջ։ Այսպէս, օրինակ, երբ մի անգամ նրան տարել էին գետի վրայ խոնարհած բարձր քարափը, նա դէմքի մի առանձին արտայայտութեամբ ականջ էր դնում ներքևը խորքում հոսող գետի խաղաղ վշշոցին, սրտի թալկութեամբ բրռնում էր մօր շրջազգեստից և ականջ դնում, թէ ինչպէս իւր ոտների տակից պոկ եկած քարերը գլորւում էին ներքև։ Այդ օրուանից նա խորութիւնը երևակայում էր որպէս ջրի խաղաղ վշշոց քարափի ստորոտում կամ որպէս ներքև գլորուող մանր քարերի երկչոտ շշուկ։

Հեռաստանը նրա ականջում հնչում էր որպէս անորոշակի մարող երգ. իսկ երբ գարնանային որոտն աղմկալի թնդիւնով անցնում էր երկնքի երեսով բոլոր տարածութիւնը լցնելով ու ցասկոտ դղրդով ամպերի ետևը կորչում, կոյր մանուկը երկիւղած սարսափով ականջ էր դնում այդ դղրդին և նրա սիրտը լայնանում էր, իսկ գլխում փառահեղ մտապատկեր էր ծընւում երկնային բարձունքի լայնածաւալութեան մասին։

Այսպէսով ուրեմն նրա համար արտաքին աշխարհի գլխաւոր անմիջական արտայայտութիւնը ձայներն էին. միւս տպաւորութիւնները միայն լրացուցիչ էին լսելիքի ստացած տպաւորութիւնների համար և նրա

մտապատկերները ձուլուում, որոշ կերպարանք էին ստանում լսողութեան տպաւորութեան համար։

Երբեմն, կէս օրուայ շոգին, երբ շուրջ ամեն ինչ լռում էր, երբ մարդկանց երթևեկութիւնը հանդարտում էր և բնութեան մէջ տիրում այն առանձին խաղաղութիւնը, որի տակ զգացւում է միայն կենսական ոյժի անընդհատ, անձայն ընթացքը, այդպիսի ժամանակ մի բնորոշ արտայայտութիւն էր երևում կոյրի երեսին։ Թւում էր, թէ արտաքին խաղաղութեան ազդեցութեան տակ նրա հոգու խորքից դուրս էին գալիս միայն իրեն մատչելի հնչիւններ, որոնց ասես թէ լարուած ուշադրութեամբ ականջ էր դնում։ Այդպիսի վայրկեաններին նրան մտիկ տալիս կարելի էր կարծել, թէ նոր ծնունդ առնող մի անորոշ միտք, որպէս երգի աղօտ մեղեդի հնչում է նրա սրտում։

II

Մանուկն արդէն հինգ տարեկան էր։ Նիհար էր, թոյլ, բայց բոլոր տան մէջ կարողանում էր ազատ մանգալ, նոյն իսկ վազել։ Նրան նայողը տեսնելով, թէ ինչպէս նա հաստատ քայլերը էր փոխում սենեակի մէջ կամ շուռ էր գալիս հէնց այն տեղերքում, ուր որ հարկաւոր էր, և ազատօրէն էլ գտնում իրեն հարկաւոր եղած առարկաները, անշուշտ պիտի կարծէր, եթէ բանը չիմանար, թէ իւր առջևինը ոչ թէ կոյր է, հապա ինքն իւր մէջ տարօրինակ կերպով կեդրոնացած, մտախոհ և անորոշ հեռուն դիտող աչքերով մի տղայ։ Պակայն բակում մեծ դժուարութեամբ էր մանգալիս և ձեռնափայտն առջևից թրխկթրկացնում։ Իսկ երբ ձեռին փայտ չէր ունենում, այն ժամանակ գետնի վրայ սողում էր և ամեն մի ճանապարհին պատահած առարկայ ձեռներով արագ-արագ ուսումնասիրում։

III

Ամարային խաղաղ երեկոյ էր։ Քեռի Մակսիմը նստած էր պարտիզում։ Հայրը, ըստ սովորականին, հեռու դաշտում գործի էր։ Բակում ու շուրջը լռութիւն էր. գիւղը սկսել էր քնել. ծառաների սենեակում բանուորների ու սպասաւորների զրոյցը նոյնպէս լռել էր։ Արդէն կէս ժամ կը լինէր, որ մանկան պառկացրել էին։

Կէսքուն պառկած էր նա։ Ահա քանի ժամանակից ի վեր այդ խաղաղ ժամի հետ նրա մտքում մի տարօրինակ լիշողութիւն էր սկսել կապնուել։ Իհարկէ, նա չէր տեսնում, թէ ինչպէս մթնում էր կապոյտ երկինքը, ինչպէս աստղաղարդ կապուտակի վրայ գրծագրուելով օրօրւում էին ծառերի սև կատարները, ինչպէս խոժոռ կերպարանք էին ստանում բակի շուրջ կառուցած շէնքերի կատարները, ինչպէս կապոյտ մառախուղը լուսնի և աստղերի ոսկեփայլ լոյսի հետ զեղուում էր երկրիս երեսին։ Բայց ահա քանի օր է, որ նա քնում էր մի առանձին, կախարդիչ տպաւորութեան տակ, որի մասին, սակայն, նա յաջորդ օրը չէր կարողանում իրեն հաշիւ տալ։

Երբ նիրհն աւելի ու աւելի թանձրանում էր նրա գիտակցութեան վրայ, երբ բոլորովին խաղաղում էր հաճարքենիների խուլ սօսաւիւնը և նա դադարում էր որոշել եւ գիւղի շների հեռաւոր հաջոցը, եւ գետի միւս կողմից լսուող սոխակի դայլայլիկը, եւ հանդում արածող յոլտակի վզից կախած բոժոժների մելամաղձոտ զնգզնգոցը,—երբ բոլոր առանձին հնչիւնները հետզհետէ նսեմանում ու կորչում էին, նրան այնպէս էր թւում, թէ այդ ամենը ձուլուելով մի կանոնաւոր, ներդաշնակ ամբողջութիւն է կազմում և պատուհա-

նից խաղաղ ներս թռչում և անորիշ, բայց զարմանալի հաճելի անուրջներ սփռելով երկար սաւառնում անկողնի վրայ։ Առաւօտները քնքշանքով լի զարթնում էր ու հետաքրքրութեամբ մօրը հարցնում.

— Այդ ինչ բան էր... երէկ... ինչ էր...։

Մայրը բանը չէր հասկանում և կարծում էր, թէ երազները խառվում են իւր մանկան։ Նա ինքն իւր ձեռքով անկողին էր դնում երեխին, հոգածութեամբ վրան խաչակնքում, և երբ մանուկը սկսում էր նիրհել, հեռանում էր, և ոչ մի առանձին բան չէր նկատում։ Սակայն մանուկը միւս օրը նորից խօսք էր բաց անում երեկոյեանից իրեն հաճելի կերպով յուզող մի բանի մասին։

— Ի՞նչ լաւ բան է, մայրիկ ջան, ինչ լաւ է։ Բայց ինչ բան է դա։

Որպէս զի այդ հանելուկը կարողանայ լուծել, մայրը որոշեց այդ երեկոյ աւելի մնալ նրա անկողնի մօտ։ Նա կոյրի մահճակալի մօտ աթոռի վրայ նստած մեքենաբար գործում էր ձեռագործի օղակներն ու ականջ դնում իւր Պետրուսի համաչափ շնչառութեան։ Թւում էր, թէ երեխան արդէն բոլորովին քնած է, երբ մթնում լսուեց նրա ցած ձայնը.

— Այստեղ ես, մայրիկ։

— Այո, այո, զաւակս...

— Հեռացիր, խնդրեմ. *այն* քեզանից վախում է և մինչև այժմ չէ գալիս։ Քիչ էր մնում բոլորովին քընէի, իսկ *այն* դեռ չկայ...

Զարմացած մայրը մի տեսակ օտարոտի զգացումով լսում էր այդ կիսաքուն, խղճալի շշունչը։ Մանուկը մի այնպիսի վստահութեամբ էր խօսում իւր երազական անուրջների մասին, որ կարծես իրականութիւն լինէին։ Բայց և այպէս մայրը վեր կացաւ, կռա-

ցաւ համբուրեց որդուն և կամացուկ դուրս եկաւ որոշելով պարտիզի կողմից աննկատելի կերպով մօտենալ բաց պատուհանին։

Դեռ իւր պտոյտը չէր արել, որ հանելուկը պարզուեց։ Նա յանկարծ լսեց սրնգի խաղաղ գեղգեղուն հնչիւնները, որ ախոռից դուրս գալով միախառնւում էին հարաւային երեկոյի շշուկին։ Իսկոյն գլխի ընկաւ, որ հէնց այս պարզ մեղեդիի անպաճոյճ գեղգեղանքն է եղել, որ նիրհի բանդագուշական ժամին հանդիպելով այնպիսի քաղցր յիշողութիւններ էին ծնեցրել մանկան մէջ։

Նա ինքն էլ կանգ առաւ. մի առ վայրկեան կանգնեց ու ականջ դրեց մալոռուսիական երգի հոգեբուղխ նուագին և, բոլորովին հանգստանալով, գնաց պարտիզի մութ ծառուղու կողմը՝ քեռի Մակսիմի մօտ։

„Ի՞նչքան լաւ է ածում Իօխիմը, մտածեց նա։ — Զարմանալի բան. ո՞րքան նուրբ զգացմունք կայ այդ արտաքուստ կոպիտ գեղջուկի մէջ“։

IV

Եւ ճշմարիտ որ լաւ էր ածում Իօխիմը։ Նրա համար նոյն իսկ ջութակ ածելն էլ մի դժուար գործ չէր. և յիրաւի, մի ժամանակ ոչ ոք օղետանը կիրակի օրերը նրանից լաւ „կազակ“ կամ լեհական զուարթ „կրակովեակ“ [1]) չէր կարող ածել։ Երբ նա մի անկիւնում նստարանի վրայ նստած ածիլած կզակով պինդ սեղմում էր ջութակը, բարձր գդակը կտրիճի պէս ծործորակին կոտրում ու կեռ կնտկնտոցը ջութակի առաձգական լա-

---

[1]) Կազակ կամ կազաչոք և կրակովեակ պարի եղանակներ են, առաջինը կազակ, խաղախ և երկրորդը Կրակով (քաղաք) անուններից առած։ Ծ. Թ.

բերին խփում, դժուար թէ օդեստանը մի մարդ լինէր, որ կարողանար իւր տեղը նստած մնալ։ Մինչև անգամ մի աչքանի ծերունի հրէան, որ Իսխիմի հետ հակաբամբ էր ածում, մինչև անգամ նա էլ վերին աստիճանի ոգևորւում էր։ Նրա անճռռնի գործին ասես թէ ուժաթափ էր լինում իւր ծանր բամբալին հնչիւններով Իսխիմի ջուլթակի թեթև, երգակ և ոստոստուն եղանակի ետևից հասնելու համար գործ դրած ճգունքից, մինչդեռ ինքը ծերուկ Եանկէլը, ուսերը բարձր վեր-վեր գցելով, թասակ ծածկած ճաղատ գլուխը պըտրտացնում էր և կայտռուն ու աշխոյժ մեղեդիի բախումների համեմատ բոլոր մարմնով ցատկոտում։ Իսկ ինչ ասենք ժողովրդի համար, որի ոտներն արդէն ի հնուց այնպէս են կազմուած, որ պարերգի զուարթ ձայների հէնց առաջին հնչիւնը լսելուն պէս իրենք իրենց սկսում են ճկուել ու տոփել։

Բայց այն օրից, որ Իսխիմը սիրեց հարևան պանի տնասուն աղախին Մարիային, այլ ևս դադարեց նաև ուրախ ջուլթակը սիրելուց։ Արդարև ջուլթակը նրան չօգնեց ժիր աղջկայ սիրտը գրաւելու, և Մարիան իւր տիրոջ սենեկապանի գերմանական անբեխ դէմքը գերադասեց գեղջուկ-երաժշտի բեխաւոր մռութից։ Այդ օրուանից օդեստանն ու երեկոյթներում այլ ևս չէր լսւում նրա ջուլթակի ձայնը։ Նա իւր ջուլթակը ախոռում մի ցցից կախ արեց, և ուշադրութիւն չէր դարձնում, որ իւր երբեմն սիրելի գործիքի լարերը խոնաւութիւնից ու անխնամ մնալուց շարունակ մէկը միւսի ետևից տրաքտրաքւում էին։ Իսկ նրանք մի այնպիսի օրհասական բարձր ու խղճալի զողանջիւնով էին տրաքւում, որ նոյն իսկ ձիերն էլ կարեկցաբար խրխնջում էին և զարմացմամբ գայրագնած գլուխները տիրոջ կողմը շուռ տալիս։

Իօխիմը ջուրթակի տեղ մի կարպատեան [1]) լեռնցի անցորդից փայտէ սրինգ գնեց։ Ինչպէս երևում է նա համոզուած էր, որ սրնգի հոգեշունչ մեղմ գեղգեղանքն աւելի է համապատասխանում իւր դառն վիճակին, աւելի լաւ է արտայայտում իւր մերժուած սրտի թախիծը։ Սակայն լեռնցու սրինգը նրա յոյսերը չարդարացրեց։ Մօտ տասը սրինգ փոփոխեց, ամեն կերպ փորձեց՝—կտրատում էր, ջրի մէջ թրջում ու արևում դնում չորացնում, կտուրից բարակ փոկով կախ անում, որպէս զի քամուն տայ, բայց ոչինչ չէր օգնում. լեռընցու սրինգը խախոլի սրտին չէր հնազանդւում։ Ուր որ հարկաւոր էր երգել, սրինգը սուլում էր միայն, և ճչում էր՝ երբ նա թալկաբեր դողդոջ էր ակնկալում. մի խօսքով բոլորովին նրա տրամադրութեան չէր յարմարւում։ Վերջապէս նա խիստ զայրացաւ բոլոր թափառաշրջիկ լեռնականների վրայ և լիովին համոզուելով, որ նրանցից ոչ ոք չէ իմանում լաւ սրինգ շինել, որոշեց ինքն իւր ձեռքովը շինել։ Մի քանի օր շարունակ յոնքերը կիտած լթափառում էր դաշտերում ու ճահիճներում, մօտենում էր ամեն մի ուռիքի թփի, մի առ մի տնտղում ճիւղերը, մի քանիսը կտրում, բայց էլի, ինչպէս երևում է, իւր ուզածը չէր գտնում։ Յոնքերը առաջուայ պէս թախծագին կիտած նա դարձեալ առաջ էր գնում իւր խուզարկութիւնները շարունակելով։ Վերջապէս նա ընկաւ մի տեղ, ուր գետակը դանդաղ էր հոսում։ Այդտեղ ջուրը հազիւ հազ տատանում էր նուռնուֆարների կատարները, խիտ առ

[1]) Կարպատեան լեռնաշղթան կիսաշրջանով պատում և մասամբ էլ ներս է մտնում Ունգարիան և Տրանսիլվանեան. այդ լեռնաշղթայի շարունակութիւնը երկու ճիւղով մտնում է նաև Վոլոյն. դա է պատճառ նաև Դնեպր, Բուգ, Դնեստր գետերի մէջ կազմուած յայտնի խութերի։ Ծ. Թ.

խիտ բուսած ուռիները, մութ և խաղաղ խորութեան մէջ գլուխները խոնարհած, չէին թողնում այստեղ քամի խաղայ։ Իօխիմը ձեռներով թփերը յետ-յետ արեց, մօտեցաւ գետակին, մի առ վայրկեան կանգ առաւ և կարծես համոզուեցաւ, որ հէնց այստեղ պիտի գտնէր իւր որոնածը։ Նրա ճակատի կնճիռները պարզուեցան։ Կօշքի ճտքից հանեց փոկով կապած ծալովի դանակը և ուռիքի տխրագին շշնջացող թփիկների վրայ ուշադիր հայեացք ձգելով, վճռաբար մօտեցաւ մի բարակ, ուղիղ, ողողուած գահաւանդի վրայ օրօրուող ուռենու ընի։ Նա, չգիտեմ ինչի, մատներով շխկացրեց ուռենու վրայ, գոհութեամբ մտիկ տուաւ, թէ ինչպէս դա առաձգաբար շորորուեց օդի մէջ, ականջ դրեց նրա տերևների շշունջին և գլխով դրական նշան արեց։

—Հէնց էս է որ կայ,—գոհութեամբ փնթփնթաց Իօխիմը և առաջուայ կտրած բոլոր շիւղերը ջուրը ձգեց։

Հիանալի սրինգ դուրս եկաւ։ Ուռը չորացրեց, տաքացրած երկաթէ թելով միջուկը այրեց, այրելով էլ վեց հատ կլորիկ ծակ բաց արաւ, եօթներորդը առ ի շեղ կտրեց, ծայրերից մինը փայտէ լեզուակով պինդ փակեց և լեզուակի վրայով մի նեղ թեք ճեղք միայն թողեց։ Այնուհետև մի ամբողջ շաբաթ սրինգը բարակ փոկով կախած էր արևի ջերմ ճառագայթների ու զըզզուն քամու հունչի տակ։ Ապա դանակով սրինգը մի լաւ մաքրեց, տպակով յղկեց ու կոշտ մահուդի կտորով էլ մի պինդ տրորեց։ Սրնգի վերևի մասը կլոր էր, մէջ տեղից սկսւում էին հարթ, կարծես յղկած կոպարներ, որոնց վրայ տաքացրած երկաթի ոլորուն կտորտանքով զանազան խորիմաստ զարդեր էին տաճած։ Մի քանի անգամ ձայնաշարերի եօթներեակը արագ-արագ գեղգեղացնելով նա յուզուած գլուխը շարժեց, կոկորդը

մաքրեց և շտապով անկողնի մօտ մի թագուն տեղ պահեց։ Նա չէր ուզում իւր երաժշտական առաջին փորձը ցերեկուայ ժխորով անել. մինչդեռ հէնց նոյն երեկոյեան քնքուշ, տխրազգած, գեղգեղուն և դողդոջ գլգլոցներ դուրս գեղուեցան ախոռից։ Իօխիմը բոլորովին գոհ էր իւր սրնգից։ Ասես թէ սրինգը իւր մասը լինէր։ Հէնց իմանաս սրնգի արձակած ձայները իւր սեփական ջերմացած ու քնքշանքով լի կրծքից էին դուրս գալիս, և նրա զգացմունքի ամեն մի զալարուածքը, նրա թախիծի ամեն մի յեղյեղանքն անմիջապէս դողդողում էին սրնգի մէջ, յուշիկ պոկ գալիս նրանից ու մէկը միւսի ետևից զիլ-զիլ տարածւում երեկոյեան գիւրազգաստ-ուշագրաւ պահուն։

V

Այժմ Իօխիմը իւր սրնգի վրայ սիրահարուած՝ նրա հետ իւր մեղրամիսն էր անցկացնում։ Ցերեկը որպէս հարկն է կատարում էր ձիապանի պարտաւորութիւնները, ձիանքը ջուրն էր տանում, լծում էր, ուղեկցում էր պանին կամ Մակսիմին։ Որ ժամանակ առ ժամանակ աչքը մօտակայ գիւղի կողմը չէր ձգում, ուր ապրում էր խստասիրտ Մարեան, թախիծը սկսում էր կրծել նրա սիրտը։ Բայց հէնց որ երեկոն վրայ էր հասնում, ամբողջ աշխարքս մտահան էր անում, մինչև սեայոն աղջկայ պատկերն իսկ ասես թէ մշուշով էր ծածկւում։ Այդ պատկերը իւր որիշութիւնը կորցրած՝ մի տեսակ նսեմ ստուերի մէջ էր նկարւում նրա առաջ, և այն էլ այն չափով, որ նրա հրաշալի սրնգի եղանակին մտախոհ-թախծալի բնաւորութիւն էր ներշընչում։

Հէնց նոյն երեկոյեան էլ Իօխիմը դոյնալիսի երա-

ժբշտական յափշտակութեամբ համակուած պառկել էր սխոռում ու իւր բոլոր զգացմունքներն արտայայտում էր սընգի վրայ դողդող մեղեդիներ գեղգեղելով։ Երաժիշտն արդէն բոլորովին մտահան էր արել ոչ միայն խստասիրտ գեղեցկուհուն, այլ և. իւր սեպհական գոյութիւնն անգամ մոռացել էր, որ յանկարծ ցնցուելով վեր կացաւ ու անկողնի վրայ նստաւ։ Ամենազգացուած պահուն էր, որ նա զգաց, թէ ինչպէս մէկը իւր փոքրիկ ձեռքի թեթև մատներն արագութեամբ անց կացրեց իւր դէմքի վրայով, սահեցրեց ձեռների վրայով և յետոյ սկսեց մի տեսակ հապճեպով սրինգը շոշափել։ Միևնոյն ժամանակ իւր կողքին լսեց մէկի արագ, յուզուած, կարճ շնչառութիւնը։

— Նալլաթ չար սատանին, ասաց նա ու սովորական չարխափանի աղօթքը մրմնջաց, ապա իսկոյն հարցրեց.— չարոց ես թէ բարոց, ուզելով իմանալ, թէ դիւական զօրութեան հետ հօ գործ չունի։

Բայց նոյն րոպէին սխոռի բաց դռնով ներս ընկաւ լուսնի լոյսը և նա տեսաւ, որ սխալուել է։ Իւր տախտի մօտ կանգնած էր կոյր պանիչը և իւր թաթիկները անյագաբար դէպի ինքն է մեկնում։

Մի ժամից մայրը, որ ուզում էր իւր քնած որդուն մտիկ տալ, նրան իւր անկողնում չգտաւ։ Սկզբում վախեցաւ, բայց մայրական նրբամտութեամբ հասկացաւ, թէ ո՞ւր պէտք է իւր որդուն որոնէր։ Շատ շփոթուեց Իսխիմը, երբ շունչ քաշելու համար կանգ առնելով տեսաւ, որ „ողորմած պանին“ սխոռի դրանը կանգնած է։ Ինչպէս երևում է պանին մի քանի րոպէ այդտեղ կանգնած ականջ է դնելիս եղել նրա ածելուն և իւր զաւակին դիտում. իսկ կոյր մանուկը Իսխիմի կարճ մուշտակի մէջ փաթաթուած, նստած էր

տախտի վրայ և դեռ շարունակում անյագաբար ականջ դնել ընդհատուած երգին։

VI

Այդ օրուանից սկսած մանուկն ամեն իրիկուն ախոռը՝ Իսխիմի մօտն էր գնում։ Նրա մտքովն անգամ չէր անցնում խնդրելու, որ Իսխիմը ցերեկն էլ մի բան ածի։ Թւում էր, թէ նա անկարող էր ենթադրել, որ ցերեկուայ ժխորի ու շարժման միջոցին հնարաւոր է այդպիսի մեղմ մեղեդիներ նուագել։ Բայց հէնց որ մութը չէր կոխում, Պետրոյսը տենդային անհամբերութեան մէջ էր ընկնում։ Երեկոյեան թէյն ու ընթրիքը նրա համար նշան էին, թէ մօտ է ցանկալի րոպէն, և մայրը, որին մի տեսակ բնազդումով դիւր չէին գալիս այս երաժշտական փորձերը, բայց և այնպէս չէր կարողանում արգիլել, որ իւր սիրելի որդին սրնգահարի մօտ գնայ ու քնելուց առաջ մի երկու ժամ նրա մօտ ախոռում անցկացնի։ Այդ ժամերը մանկան ամենաերջանիկ ժամերն էին դարձել, և մայրը սաստիկ նախանձով տեսնում էր, թէ ինչպէս երեկոյեան ստացած տպաւորութիւնները նոյն իսկ յաջորդ օրուայ ընթացքում էլ իշխում էին մանկան վրայ, ինչպէս իւր գգուանքներն այլ ևս առաջուայ նման չէին գրաւում նրան, ինչպէս իւր գոգը նստած ու գրկախառնած միջոցին էլ մի տեսակ մտազբաղ կերպարանքով Իսխիմի երէկուայ երգն է մտաբերում։

Այդ ժամանակ նրա միտն ընկաւ, որ մի քանի տարի առաջ Կիևում պանի Ռադեցկու պանսիոնում ուսանելիս ինքն ևս, ի միջի այլ „հաճելի արուեստների“ երաժշտութիւն էլ էր ուսումնասիրել։ Ճիշտն ասած, այդ յիշողութիւնը, ինքն ըստ ինքեան առած, մի այն-

քան էլ հաճելի յիշատակ չէր թողել իւր մէջ, քանի որ դա կապուած էր գերմանացի պառաւ ուսուցչուհի օրիորդ Կլապսի անուան հետ, որ մի չափազանց նիհար, շատ սոսկական և, որ գլխաւորն է, խիստ ցասկոտ կին էր։ Այս չափազանց մաղձոտ օրիորդը, որ մեծ աջողութեամբ „կոտրատում էր“ իւր աշակերտուհիների մատները նրանց անհրաժեշտ ճկունութիւն տալու համար, միևնոյն ժամանակ էլ զարմանալի աջողութիւն ունէր իւր սանիկների մէջ երաժշտական կայծի ամենայն զգացմունք սպանելու։ Այս վեհերկոտ զգացմունքն արդէն պանի Կլապսի ներկայութիւնից իսկ անհետանում էր, էլ չենք խօսում նրա գործադրած մանկավարժական միջոցների մասին։ Այդ էր պատճառը, որ Աննա Միխայլովնան պանսիօնից դուրս գալուց յետոյ, նոյն իսկ ամուսնանալուց յետոյ, չէր էլ մտածել, որ իւր երաժշտական վարժութիւնները վերսկսի։ Բայց այժմ խախոլ-սրնգահարի ածածը լսելով զգում էր, որ դէպի նա տածած նախանձի հետ իւր հոգու մէջ կամաց-կամաց զարթնում է կենսատու մեղեդիի զգացողութիւնը, իսկ գերմանուհու պատկերը նսեմանում։ Այս ամենի հետևանքն այն եղաւ, որ պանի Պոպէլսկայան իւր ամուսնուն խնդրեց, որպէս զի քաղաքից մի դաշնամուր բերել տայ։

— Քու կամքդ է, սիրելիս, — պատասխանեց օրինակելի ամուսինը։ — Դու, կարծեմ, մի այնքան էլ երաժշտութեան սէր չունէիր։

Նոյն օրն և եթ նամակ ուղարկեցին քաղաք։ Բայց մինչև որ դաշնամուրը քաղաքից կը գնէին ու կը բերէին գիւղ, առ նուազն երկու-երեք շաբաթ կանցկենար։ Մինչդեռ ամենայն իրիկուն հնչում էին մեղեդու հրաւէրները և երեխան գլխապատառ շտապում

էր դէպի՛ ախոռ՝ առանց նոյն իսկ մօրից թոյլտուութիւն խնդրելու։

Ախոռատան յատուկ տնախորժ հոտը միախառնուում էր չոր արօտի և խամ կաշուց պատրաստած փոկի սուր հոտի հետ։ Ձիանքը խշշացնելով հանդարտ ծամում էին վանդակապատի ետևից կորզած խոտը։ Երբ սրնգահարը կանգ էր առնում, որպէս զի շունչ քաշի, ախոռում որոշակի լսւում էր պարտիզի հաճարքենու շշունչը։ Պետրիկը կախարդուածի նման նստած էր լինում ու լսում։

Նա երբէք երաժշտին չէր ընդհատում, բայց երբ Իսխիմը ինքն էր կանգ առնում և երկու-երեք լոսլէ լռութիւն տիրում, այն ժամանակ՝ երեխի համր հիացումը փոխւում էր անյագ տենչի։ Նա ձեռքը մեկնում էր դէպի սրինգը, դողդոջուն ձեռներով վերցնում ու շրթունքներին մօտեցնում։ Եւ որովհետև այդ միջոցին նրա շունչը բռնւում էր, ուստի և սրնգի ձայները սկզբում դողդոջ ու թոյլ էին դուրս գալիս։ Բայց յետոյ քիչ քիչ սկսաւ այդ պարզ գործիքին վարժուել։ Իսխիմը նրա մատները դնում էր ծակերի վրայ. և թէև նրա մանրիկ ձեռները հազիւ էին այդ ծակերին հասնում, բայց շուտով սովորեց ձայնաշարի ձայները հանել։ Եւ ամեն մի-ձայն ասես թէ իւր անհատական բնաւորութիւնը, իւր սեպհական կերպարանքն ունէր. նա արդէն գիտէր, թէ սրնգի ո՛ր ձայնն ո՛ր մատի մէջ է ապրում, ո՛րտեղից հարկաւոր է արձակել այդ ձայնը, և մի մի ժամանակ, որ Իսխիմը ծանր-ծանր մի որ և է պարզ եղանակ չէր նուագում, երեխի մատներն էլ սկըսում էին հետը միասին շարժուել։ Նա բոլորովին որոշակի կարողանում էր եղանակի յաջորդական ձայնները պատկերացնել իրենց սովորական տեղերում զետեղուած։

VII

Վերջապէս ուղիղ երեք շաբաթից դաշնամուրը քաղաքից բերին։ Պետրոյսը կանգնած էր բակում և ուշադրութեամբ լսում, թէ ինչպէս բանուորներն իրար անցած պատրաստուում էին „երաժշտական գործիքը“ ներս տանելու։ Երևի շատ ծանր պիտի լինէր դա, քանի որ նրան վեր բարձրացնելիս սայլը ճռճռում էր, իսկ մարդիկ տնքտնքում ու ծանր շունչ քաշում։ Ահաւասիկ նրանք համաչափ, ծանր քայլերով առաջ շարժուեցան. նրանց ամեն մի քայլափոխին գլխներից բարձր մի բան տարօրինակ կերպով ղողանջում էր, քրթմնջում ու զնգզնգում։ Երբ տարօրինակ գործիքը ընդունարանում յատակի վրայ էին դնում, նա դարձեալ խուլ ղողանջիւն արձակեց, հէնց իմանաս սաստիկ զայրացած՝ մէկին սպառնալիքներ տալիս լինէր։

Այս ամենը երեխին վախի նման մի զգացում էր պատճառում, և նրան չէր տրամադրում նոր բերած անշունչ, բայց և ցասկոտ հիւրի օգտին։ Նա հեռացաւ գնաց պարտէզ և չլսեց, թէ ինչպէս գործիքը ոտների վրայ հաստատեցին, ինչպէս քաղաքից եկած դաշնակ լարողը բանալիքով լարում էր նրան. ստեղունքը փորձում ու մետաղէ լարերը յարմարեցնում։ Երբ ամեն բան պատրաստ էր, մայրը պատուիրեց Պետրոյսին ներս կանչել։

Այժմ արդէն Աննա Միխայլովնան Վեննայի ամենալաւ վարպետի շինած գործիքով զինուած կանխաւ տօնում էր իւր յաղթանակը, որ տանելու էր գիւղական անպաճոյճ գործիքի վրայ։ Նա հաւատացած էր, որ իւր Պետրոյսն այժմ արդէն կը մոռանայ ախոռն էլ, սրնգահարին էլ, և իւր բոլոր հաճոյքը իրենից կստանայ։ Ծիծղուն աչքերով մտիկ տուեց մայրը Մակ-

սիմի հետ վեհերկոտութեամբ ներս մտնող երեխին ու Իօխիմին, որը թոյլտուութիւն էր խնդրել հեռու երկրից բերած գործիքի ձայնը լսելու, և այժմ ամօթխածութեամբ աչքերը խոնարհած, ցցունքը (քեաքուլը) կախ արած կանգնած էր դրան կողքին։ Երբ որ քեռի Մակսիմն ու Պետրոյսը նստեցին բազմոցի վրայ, մայրը յանկարծ բազխեց դաշնակի ստեղունքը։

Նա ածում էր այն պիէսը, որ օրիորդ Կլապսի առաջնորդութեամբ կատարելապէս ուսումնասիրել էր պանի Ռադեցկու պանսիօնում։ Դա մի այնքան էլ աղմկալի բան չէր, բայց բաւական մանուածապտոյտ, մատների բաւական ճկունութիւն պահանջող հատուած էր։ Աննա Միխայլովնան հրապարակական հարցաքննութեան միջոցին այդ պիէսի շնորհիւ առատ գովասանք էր վաստակել թէ իրեն և թէ մանաւանդ իւր ուսուցչուհու համար։ Ոչ ոք չի կարող հաստատապէս ասել, բայց շատերը գլխի էին ընկել, որ պանի Եացենկոն հէնց այդ կարճատև քառորդ ժամուայ միջոցին, որ այդ խրթին պիէսն էր ածում, կարողացել էր հրապուրել լռակեաց պան Պոպէլսկուն։ Այժմ դեռատի կինը միևնոյն բանն էր ածում մի ուրիշ յաղթանակ տանելու գիտակցական հաշուով,—նա ցանկանում էր աւելի զօրեղ կերպով գրաւել իւր որդու փոքրիկ սիրտը, որ արդէն հրապուրուած էր գեղջկական սրինգով։

Սակայն այս անգամ նրա ակնկալութիւններն ի դերև ելան, Վեննայի գործիքն անզօր եղաւ Ուկրայնայի [1]) ուռի կտորի դէմ մաքառելու։ Ճշմարիտ է,

---

[1]) Հնում Ուկրայնա կոչւում էին Մոսկվայի թագաւորութեան մէջ սահմանի մօտ եղած գաւառները։ Ներկայումս այդ անունը մնացել է միայն Մալառուսիայի համար, որ Արուպական Ռուսիայի Հարաւային մասն է, իսկ ժողովուրդն էլ կոչւում է մալառուս։ Ծ. Թ.

Վեննայի [1]) դաշնամուրը զօրաւոր միջոցներ ունէր, թանկագին փայտ, հիանալի լարեր, Վեննայի վարպետի պատուական գործ, ընդարձակ բարձրահունչ ձայների հարստութիւն ունէր նա։ Բայց Ուկրայնայի սրինգն էլ իւր դաշնակիցներն ունեցաւ, որովհետև նա իւր տանն էր, Ուկրայնայի հարազատ բնութեան մէջ։

Քանի դեռ Իսխիմն այդ սրինգը իւր դանակով չէր կտրել ու միջուկն էլ շիկացրած երկաթով դաղել, նա տատանւում էր այստեղ, արդէն մանկան ծանօթ մայրենի գետակի մօտ, նրան փայփայում էր նոյն Ուկրայնայի արևը, որ ջերմացնում էր և իրեն, մանկանը, միևնոյն Ուկրայնայի քամին էլ փչում էր վրան, մինչև որ Ուկրայինցի սընգահարի սուր աչքը նրան նկատեց ողողուած գահաւանդի վրայ։ Եւ այժմ օտար երկրացի եկուորի համար դժուար էր մաքառել տեղական հասարակ սընգի հետ, քանի որ այդ սրինգը կոյր մանկան համար երևան էր եկել նիրհման խաղաղ ժամին, երեկոյեան խորհրդաւոր շշուկի, քուն մտնող հաճարքենիների սօսաւիւնի միջոցին՝ Ուկրայնայի ամբողջ հայրենի բնութեան հետ միացած։

Բացի դրանից, պանի Պոպէլսկայան շատ հեռու էր Իսխիմի հմտութեանը հաւասարուելուց։ Ճշմարիտ է, նրա բարակ մատները թէ աւելի ճկուն էին և թէ դիւրաշարժ, նրա ածած մեղեդին աւելի բարդ ու փարթամ, իսկ օրիորդ Կլապսն էլ շատ աշխատանք էր թափել իւր աշակերտուհուն դժուարին գործիքի վրայ ածել սովորեցնելու համար. բայց դրա փոխարէն Իսխիմն էլ երաժշտական բնատուր զգացմունք ունէր. նա եւ սիրում էր, և տխրում. իսկ թէ սիրելիս և թէ տրխրելիս դիմում էր հարազատ բնութեան։ Նրան անսա-

---

[1]) Աւստրիայի մայրաքաղաքն է։ Ծ. Թ.

ճոյճ եղանակներ սովորեցնողը եղել է այդ բնութիւնը, դրա անտառի աղմուկը, տափաստանի արօտի խաղաղ շշուկը, այլ և հայրենի մտախոհ, հինաւուրց երգը, որը դեռ իւր մանկական օրրանի մէջ էր լսել։

Այո, Վեննայի գործիքին դժուար էր յաղթել գեղջկական սրնգին։ Եւ բոպէ անգամ չանցած Քեռի Մակսիմը իւր անթացուպով յատակին խփեց ուժգին։ Աննա Միխայլովնան քեռի Մակսիմի կողմը դարձաւ և Պետրիկի դժգոյն դէմքի վրայ տեսաւ նոյն արտայայտութիւնը, որով մանուկը գարնանային առաջին զբօսանքի այն անմոռանալի օրը վեր էր ընկել արօտի մէջ։

Իօխիմը կարեկցաբար մտիկ տուեց մանկանը, ապա արհամարհական հայեացք գցեց գերմանական երաժշտական գործիքի վրայ ու իւր կոպիտ կօշիկներով ընդունարանի յատակը թրխթրխկացնելով հեռացաւ գնաց։

VIII

Այս անաջողութիւնը շատ արտասուք պատճառեց խեղճ մօրը՝—արտասուք ու ամօթ։ Ի՞նչ, „ողորմած պանի“ Պոպէլսկայեան, որ „ընտիր հասարակութեան“ բուռն ծափահարութեան էր արժանացած, իրեն այսպէս բոլորովին յաղթուած զգայ, և այդ էլ ումնից։ Մի որ և իցէ ձիապան Իօխիմից ու նրա տխմար ծուանից։ Եւ երբ մտաբերեց անաջող նուագածութիւնից յետոյ խախոլի [1]) արտայայտած արհամարհալից հայեաց-

---

[1]) Խախոլ կոչում են Մալաուրուսիայի բնիկներին, որոնք սովորութիւն ունէին իրենց գլխի կատարից թողնել մի փունջ մազ՝ ծամ արած, ցցունք (քեաքուլ), ըստ երևութին մողոնների իշխանութեան ժամանակից մնացած սովորութիւն։ Դրանից էլ առած երկիրը կոչում են խախլանդիա, տղամարդկանց՝ խախոլ, իսկ կանանց՝ խախլուշկա։ Ծ. Թ.

քը, բարկութիւնից նրա երեսը կրակ կտրեցաւ, և անկեղծօրէն ատեց այդ „զզուելի գեղջուկին“։

Բայց և այնպէս ամեն իրիկուն, երբ զաւակը դէպի ախոռն էր վազում, նա բաց էր անում պատուհանը, կռթնում ու անյագաբար ականջ դնում։ Սկզբում նա արհամարհական զայրոյթով էր ականջ դնում և աշխատում էր միայն ծաղրելի կողմեր գտնել այդ „տրխմար շվշվոցի“ մէջ։ Բայց տակաւ առ տակաւ — նա ինքն էլ չէր կարողանում իրեն հաշիւ տալ, թէ ինչպէս եղաւ այդ — տխմար շվշվոցը, սկսեց տիրել իւր ուշադրութեանը, որից յետոյ արդէն սկսեց ագահաբար ունկընդրել մաախոհ — տխուր եղանակներին։ Այն ժամանակ նա ինքն իրեն հարց էր տալիս, թէ ինչումն է դրանց հրապոյրը, նրանց կախարդական գաղտնիքը, և կամաց-կամաց այդ կապոյտ երեկոները, իրիկնադէմի անորոշ ստուերն ու բնութեան հետ երգի ունեցած զարմանալի ներդաշնակութիւնը՝ նրան այդ հարցը պարզեցին։

„Այո, — մտածում էր նա ինքն էլ յաղթահարուած ու նուաճուած, — այստեղ մի բոլորովին այլատեսակ, անկեղծ զգացմունք կայ... մի գիւթական բանաստեղծութիւն, որ ձայնախազերով կարելի չէ սովորել“։

Եւ դա ճշմարիտ էր։ Այդ բանաստեղծութեան գաղտնիքն այն կապն էր, որ կար վաղուց մեռած անցեալի և յաւետ կենդան, յաւետ մարդկային սրտին ազդող ու այդ անցեալին վկայ բնութեան միջև։ Իսկ նա, այդ ճարպով ածած անճոռնի կօշիկներ հագած, կոշտացած ձեռներ ունեցող կոպիտ գիւղացին, իւր սրտում կրում էր այդ ներդաշնակութիւնը, բնութեան այդ կենդանի զգացումը։

Եւ Աննա Միխայլովնան զգում էր, որ իւր մէջ գոռոզ „պանին“ խոնարհում էր գեղջուկ ձիապանի ա-

ռաջ։ Նա մոռանում էր Իսխիմի կոպիտ հագուստը, նրա վրայից փչող կուպրի հոտը, և երգի յուշիկ գեղգեղանքի միջից իւր առաջ գծագրւում էր նրա հեզահամբոյր դէմքը, մոխրագոյն աչքերի քնքուշ հայեացքը, երկար բեխերի տակ խաղացնող վեհերկոտ-ծաղրական ժպիտը։ Ծամանակ առ ժամանակ բարկութեան բոցը նորից երևան էր գալիս նորատի կնոջ դէմքի ու քունքերի վրայ,—նա զգում էր, որ իւր որդու ուշադրութիւնը գրաւելու համար կռիւ մղելով՝ այդ „գեղջուկին“ հաւասարուել, նրա հետ մի գծի վրայ էր կանգնած, և նա, այդ „գեղջցին“, յաղթել էր իրեն։

Իսկ պարտիզի ծառերը շշնջում էին նրա գլխի վերևը. կապոյտ երկնքում հրհրատում էր գիշերը և կապոյտ շամանդաղի նման սփռւում երկրիս երեսին, և միևնոյն ժամանակ Իսխիմի երգերի արտայայտող ջերմ թախիծը զեղւում էր մանկամարդ կնոջ հոգու մէջ։ Նա աւելի ու աւելի խոնարհւում էր և աւելի ու աւելի սովորում հասու լինել անմիջական և զուտ անարուեստ բանաստեղծութեան անպաճոյճ գաղտնիքին։

IX

Այո, զուտ, վառ զգացում ունէր գեղջցի Իսխիմը։ Իսկ ինքը։ Մթթէ այդ զգացումից ոչ մի կաթիլ չունի ինքը։ Բայց ինչ ջերմութիւն է ուրեմն իւր կրծքի մէջ, և ինչի՞ այդքան յուզուած բաբախում է սիրտը և աչքերն ակամայ արտասուքով լցւում։ Միթէ զգացում չէ՞ դա, սիրոյ կիզիչ զգացում չէ՞ դէպի իւր բախտազուրկ կոյր որդին, որ իրենից խոյս է տալիս, Իսխիմի մօտ գնում, և որին ինքը չէ կարողանում կենդանի վայելչութիւն պատճառել։

Նա յիշեց իւր նուազածութիւնից մանկան դէմքի վրայ երևան եկած ցաւի արտայայտութիւնը և աղե-

խարշ արտասուքի կաթիլները թափուեցան նրա աչքերից. նա ժամանակ առ ժամանակ հազիւ հազ զսպում էր իրեն խեղդող, դուրս ժայթքելու պատրաստ հեկեկանքը։

Խե՜ղճ մայր։ Զաւակի կուրութիւնը իրեն համար էլ մշտական, անբուժելի ցաւ էր դարձել։ Այդ արտայայտւում էր թէ իւր ցոյց տուած ցաւագար-չափազանցացրած քնքշութեան մէջ, և թէ ամբողջապէս իրեն կլանած այն զգացման մէջ։ որ հազարաւոր անտեսանելի լարերով իւր վշտահար սիրտը կապում էր մանկական տանջանքի ամեն արտայայտութեան հետ։ Այդ պատճառով էլ այն, որ ուրիշին զայրոյթ կպատճառէր միայն՝—գեղջուկ-սրնգահարի հետ ունեցած այս տարօրինակ մրցումը՝—ամենազօրեղ-չափազանցացրած կիզիչ տանջանքների աղբիւր դարձաւ նրա համար։

Այսպէս, առանց նրան թեթևութիւն պատճառելու, անցնում էր ժամանակը, թէև դա անօգուտ էլ չմնաց նրա համար,—նա ինքն էլ սկսաւ իւր մէջ զգալ մեղեդիի ու բանաստեղծական զգացման այն կենդանի հոսանքը, որ արտայայտւում էր խախոլի երգի մէջ և այնքան կախարդել էր իրեն։ Այն ժամանակ նրա մէջ յոյս ծագեց։ Անձնավստահութեան յանկարծական զեղման բոպէներին նա մի քանի անգամ մօտենում էր դաշնամուրին և կափարիչը բաց անում, որպէս զի ստեղների քաղցրագահ բախումներով խեղդէ մեղմ սրընգի ձայնը։ Բայց ամեն անգամ էլ անվճռականութեան ու ամօթխած վեհերկոտութեան զգացումը նրան ետ էր կասեցնում այդ փորձերից։ Նա մտաբերում էր իւր մանկան տանջանք արտայայտող դէմքն ու խախոլի արհամարհական հայեացքը, և մթութեան մէջ ամօթից այրւում էին նրա այտերը, իսկ ձեռքը երկչոտ անյաջութեամբ անց էր կացնում դատարկ օդի մէջ, ստեղների վերևից։

Բայց և այնպէս օր օրի վրայ նրա մէջ աւելանում էր իւր ներքին այժի մի տեսակ գիտակցութիւն և, յարմար ժամանակները, երբ մանուկը երեկոյեան դէմ խաղ էր անում հեռաւոր ճեմելիքում կամ զբօսնելու էր գնում, նստում էր դաշնամուր ածելու։ Առաջին փորձերից մի այնքան էլ գոհ չէր նա՝ – ձեռները իւր ներքին գիտակցութեան չէին հնազանդւում. գործիքի հնչիւնները սկզբում խորթ էին թւում իւր տրամադրութեան։ Բայց կամաց-կամաց այդ տրամադրութիւնը աստիճանաբար աւելացող ամբողջականութեամբ ու թեթևութեամբ ձուլւում էր այդ հնչիւնների հետ. խախոլի դասերն իզուր չանցան, իսկ մայրական ջերմ սէրն ու այն զգաստ ըմբռնողութիւնը, որով հասկացել էր, թէ ինչ բանն էր այդքան զօրեղ կերպով իշխել երեխի սրտին, նրան հնարաւորութիւն տուին այդ դասերը շատ շուտով իւրացնելու։ Այժմ նրա մատները ոչ թէ ճարճատուն մանուածապտոյտ „պիէսներ“ էին ածում, հապա մեղմ երգեր, Ուկրայնայի տխուր „խոհերը“ մայրական սիրտն ամոքելով հնչում էին ու. լալիս մութ սենեակներում։

Վերջապէս նա այնքան վստահութիւն ստացաւ, որ դուրս եկաւ յայտնի պատերազմ, և ահա, երեկոները մի տարօրինակ մրցութիւն սկսուեց կալուածատիրոջ տան և Իօխիմի ախոռի միջև։ Մի կողմից յետ ընկած ծղոտածածկ ախոռից դուրս էին թռչում սրնգի գեղգեղուն դայլայլիկները, իսկ միւս կողմից հաճարքենիների սաղարթի արանքով լուսնի լոյսի արտափայլմունքից ցոլացող տիրական տան բաց պատուհաններից սլանում էին դաշնամուրի լիահնչիւն երգեցիկ դաշնակները։

Սկզբում ոչ երեխան և ոչ էլ Իօխիմը չէին ուզում ուշադրութիւն դարձնել ապարանքի խրթնածածուկ

գործիքի վրայ, որի մասին նրանք նախապաշարուած էին։ Մինչև անգամ երբ Իսխիմը կանգ էր առնում, մանուկը կիտում էր յոնքերն ու անհամբերութեամբ նրան զօր անում.

— Դէ, դէ, ածիր։

— Բայց դեռ երեք օր չանցած Իսխիմը սկսեց իւր այդ դաղարներն աւելի ու աւելի յաճախ կրկնել։ Նա շուտ շուտ սրինգը մի կողմն էր դնում և առաւելող հետաքրքրութեամբ ականջ դնում դաշնամուրի ձայներին. այդպիսի միջոցներին մանուկն էլ էր ականջ դնում ու մոռանում էր իւր բարեկամին դրդել, զօր անել։ Վերջապէս Իսխիմը մտախոհ կերպով ասաց.

— Ото-жъ якъ гарно... Бачъ, яка воно штука...

Իսկ յետոյ էլ, նոյն մի բանի ունկնդրող մտազբաղ-մտամոլոր կերպարանքով, երեխին գիրկն առաւ ու պարտիզի միջով գնաց դէպի ընդունարանի բաց պատուհանը։

Նա կարծում էր, թէ „ողորմած պանին“ իւր սեփական զուարճութեան համար էր միայն ածում ու իրենց վրայ ուշադրութիւն չէ դարձնում։ Մինչդեռ Աննա Միխայլովնան լռել էր իւր ոսոխ-սրնգի դաղարելը, տեսնում էր իւր յաղթանակը, և նրա սիրտն ուրախութիւնից բաբախեց։

Միևնոյն ժամանակ լիովին հանգաւ նաև նրա դէդի Իսխիմը տածած զայրոյթը։ Նա երջանիկ էր և խոստովանում, որ այդ երջանկութիւնը Իսխիմին է պարտական՝ — նա սովորեցրել էր իրեն, թէ ինչպէս պէտք էր մանկանը կրկին դէպի ինքը հրապուրել, և եթէ այժմ իւր զաւակը նոր տպաւորութիւնների ահագին գանձեր ստանար, պէտք է նրանք երկուսն էլ գեղջուկ սրնգահարին, իրենց ընդհանուր ուսուցչին շնորհապարտ լինէին։

(կը շարունակուի)

ՄՈՒՇԵ ՎԱՐԴԱՊԵՏ.

Ռուս-վրացերէն հանրագիտական բառարան, Դ. Տէր-Դաւթեան 348

ԱՅԼԵՒԱՅԼՔ

Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի տօնը. 351
Գր. Ջանչեանի 25 ամեակ. 352
† Ս. Գուլամիրեան . . . . . —
Մատենագրական նորութիւններ. 1, Մ. Նալբանդեանի «Աղցմիք». 2, Աղուանից պատմութիւն. 3, Վինոգրադովի ընդհանուր պատմութիւն. 4, «Դիւան Հայոց պատմութեան» Ե. գիրք. 5, «Ախուրեան» գեղարուեստական հանդէս 353
Քիչ մ'ալ անուշեղէն, † Ց. Պարոնեան 354
Ախալքալակի ապէտը 357
Գ. Մարկոս Ապաբէգեանին. 360
Խմբագրութեան ծանուցումներ 361
Ստացուած գրքեր 363

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՅԱՒԵԼՈՒԱԾ

Կանոնք ս. Ժողովոց և ս. Հարց եկեղեցւոյ, Արիստակէս արքեպ. Դաւթեան. . . . . 1—16
Կոյր երաժիշտը, էսիւդ. Վլ. Կարալէնկոյի, թրգմ. Մուշէ վ. 1—48

ԼՈՒՄԱՅ

ԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

1896 *թ. յունուարի* 1-*ից հրատարակւում է Թիֆլիսում տարեկան երկու գիրք, բաղկացած* 900—1000 *երեսից և հետեւեալ բաժիններով.—վիպական, տեղագրական, ազգագրական, մանկավարժական, առողջապահական, կենսագրական, պատմական, ժողովրդական, մատենախօսութիւն, այլեւայլք և յաւելուած։*

Առաջին գիրքը լոյս է տեսնում յունուար 1-*ին, երկրորդը՝ յուլիս* 1-*ին։*

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է 3 ՌՈՒԲԼԻ
ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ԳԻՐՔՆ ԱՌԱՆՁԻՆ 2 ՌՈՒԲԼԻ

Մինչև այժմ տպագրուել է 9 *գիրք, որոնք լոյս են տեսել միշտ խոստացած ժամանակներին և երբեմն էլ ամսաշափ առաջ։*

Բանալով «ԼՈՒՄԱՅ»-*ի* **1900** *թուի բաժանորդագրութիւնը՝ խմբագրութիւնը յայտնում է, որ այս տարի ևս նոյն ճշտութեամբ պիտի հրատարակուի, ինչպէս և անցեալ տարիները. նոյն ծաւալով և աշխատակիցների աւելի ստուար խմբի օգնութեամբ։*

Հասցէն՝ Тифлисъ, Редакція „ЛУМА“ կամ որոշուելերեն **Гюту Аганьянцъ.**

Արտասահմանից՝ Tiflis Archiprêtre Güt Aghaniantz, Redaction «Louma».